

ներին։ Ոչ միայն չը կար այդ պատասխանը, այլ և բոլոր դաւագութիւնների վերջնական նպատակը այն էր, որ բացատրէին ու արդարացնէին պատիժը, որի անհրաժեշտութիւնը ակնյայտնի ճշմարտութիւն էրն համարում։ Նեխլիւզովը շատ էր կարգում, բայց կցկտուր, և պատասխանի բացակայութիւնը վերագրում էր հարցը այդպէս վայրիվերոյ ուսումնասիրելուն, յուսալով ապագայում գտնել այդ պատասխանը, ուստի և թոյլ չէր տալիս իրան դեռ ևս հաւատալ այն պատասխանի իրաւացիութիւննը, որ վերջին ժամանակները, քանի գնում, աւելի ու աւելի յաճախ էր ծագում երա մաքում։

XXIX

Կալանաւորների այն խումբը, որի մէջ էր գտնւում Մասրովան, պէտք է Սիրիք ուղարկէին յուլիսի 5-ին։ Նեխլիւզովն էլ պատրաստուեց այդ օրը ճանապարհ ընկնելու։ Նրա ուղևորման նախընթաց օրը քաղաք եկաւ հետք տեսնուելու նրա քոյրը իր ամուսնու հետ։

Նեխլիւզովի քոյրը, Նատալիա Խվանովսա Բագոժինսկայան, 10 տարով մեծ էր նրանից։ Նեխլիւզովը մասամբ նրա ազգեցութեան տակ էր մեծացել։ Քոյրը շատ էր սիրում եղբօրը, երբ նա փոքր էր, իսկ վերջը, ամուսնանալուց քիչ առաջ, երբ նա 25 տարեկան աղջիկ էր, իսկ եղբայրը՝ 15 տարեկան տղայ, նրանք մտերմացան իրը գրեթէ հասակակիցներ։ Քոյրը այն ժամանակ սիրահարուած էր նրա հանգուցեալ ընկեր Նիկոլենկա Խրտենինի վրայ։ Նրանք երկուսն էլ սիրում էին Նիկոլենկային և սիրում թէ նրա և թէ իրանց մէջ այն բանը, որ լաւագոյնն էր նրանց մէջ և որ միացնում է բոլոր մարդկանց։

Այսուհետեւ նրանք երկուսն էլ փշացել էին, — եղբայրը՝ չնորսչիւ իր վարած վաս կեանքի, իսկ քոյրը՝ չնորսիւ այն բանի, որ ամռանացել էր այնպիսի մարդու հետ, որին ինքը սիրել էր զգայական սիրով և որը ոչ միայն չէր սիրում այն ամենը, ինչ որ մի ժամանակ Նատալիա Խվանովսայի ու Դմիտրիի համար ամենանուիրական ու ամենաթանկագին բանն էր աշխարհում, այլ և նոյն իսկ չէր հասկանում, թէ ինչ բան է այդ, և այն բոլոր ձգառումները դէպի բարոյական կատարելագործութիւնը և ծառայութիւնը մարդկանց շահերին, որոնցով մի ժամանակ աղրում էր Նատալիա Խվանովսան, վերագրում էր իր համար միակ հասկանալի գրդումին — ցուցամոլ ինքնասիրութեան։

Բագոժինսկին ոչ անունի տէր էր, ոչ հարստութեան, բայց

շատ ճարպիկ ծառայող էր և կարողացել էր դատական պաշտօն-ներում համեմատաբար փայլոն կարիքը անել, ճարտար կերպով նաւազմարելով ազատամտութեան ու պահպանողականութեան արանքին, օգտուելով այդ երկու ուղղութիւններից նրանով, որը որոշ ժամանակ և որոշ գէպքում լաւագոյն հետևանք-ներ կարող էր տալ նրա ապրուստի համար, և մանաւանդ իր մի առանձնայատկութեամբ, որով նա դուր էր գալիս կանանց, Արդէն առաջին ջահէլութիւնը անցրած ժամանակը նա ծանօթացել էր արտասահմանում Նեխիլիւգովների հետ, սիրահարեցրել էր իր վրայ Նատաշային, որ նոյնպէս ջահէլ չէր, ու պսակուել էր նրա հետ գրեթէ Նատաշայի մօր կամքի հակառակ, որ մէալլիան^{*)} էր համարում այդ ամուսնութիւնը Նեխիլիւգովը, թէպէտե ծածկում էր իր այդ ինքնն իրանից, թէպէտե կուռում էր իր այդ զգացմունքի հետ, ատում էր իր փեսային, նա հակալրելի էր թւում Նեխիլիւգովին իր զգացմունքների գոեհկա-կանութեամբ, իր ինքնապաստան սահմանափակութեամբ և զըլ-խաւորապէս այն պատճառով, որ քոյրը կարողացել էր սիրել այդ գծուծ բնաւորութեան տէր մարդուն կրօստ, եսական ու զգայական սիրով և ի հաճոյս այդ մարդու խեղդել այն բոլոր լաւ բանները, ինչ որ կար իր մէջ Նեխիլիւգովը երբէք չէր կա-րողանում առանց խորին կոկիծի մտածել, որ Նատաշան՝ այդ պսպղան ճազատ զլիով ու փրչոտ մարմնով ինքնապաստան մարդու կինն է, նա չէր կարողանում նոյն իսկ զսպել իր զըլուան-քը դէպի այդ մարդու երեխանները, Եւ ամեն անդամ, երբ իմանում էր, որ քոյրը պատրաստում է երեխայ բերելու, այնպիսի զգացմունք էր զարթնում մէջը, կարծես թէ ցաւ զգալիս լինէր, որ քոյրը նորից ինչ որ վատ բանով է վարակուել այդ՝ իրանց ամենքի համար օտար մարդուց:

Թագօժինսկինները մէնակ էին եկել, առանց երեխանների, — նրանք երկու երեխայ ունէին՝ մի տղայ ու մի աղջիկ, — և իջել էին ամենալաւ հիւրանոցի ամենալաւ համարումն Նատա-լիա իվանովնան գալուն պէս գնաց իրանց հին բնակարանը, բայց եղբօրը այնտեղ չը գտնելով և Ս.գրաֆենա Պետրօվնայից իմանալով, որ նա տեղափոխուել է կահաւորուած համարներ, գնաց այնտեղ, կահաւորուած համարների կեղտուա ծառան, հան-դիպելով նրան մութ ու ծանրահոտ միջանցքում, որ ցերեկն էլ լուսաւորում էր լամպի լոյսով, յայտնեց, որ իշխանը տանը չէ: Նատալիա իվանովնան ասաց ծառային, որ ցոյց տայ իրան

*) Ամուսնութիւն՝ ստորագաս անձի հետ:

Կղբօր համարը, որովհետեւ ուզում էր տոմսակ թողնել նրան, Ծառան առաջնորդեց նրան:

Մտնելով եղբօր համարը՝ Նատալիա Իվանօվնան ուշի ու շով գննեց նրա երկու փոքրիկ սենեակները: Ամեն բանում երեսում էր եղբօր մաքրասիրութիւնը ու ճշտապահութիւնը, յատկութիւններ, որոնք վազուց յայտնի էին նրան: Բացի այդ նա խսկոյն նկատեց կահաւորութեան մէջ տիրող համեստութիւնը, որ բոլորովին նոր բան էր նրա համար և սաստիկ զարմացրեց նրան: Գրասեղանի վրայ նա տեսաւ հսուց ծանօթ թղթածանրացը բրօնզէ չնիկով, կարգով դարսած թղթակալներ, թղթեր ու գրելու պարագաներ, ստաժագրքի հատորները, Հէնրի Զօրջի անդիմերէն գիրքը և Տարդի ֆրանսերէն գիրքը, որի մէջ դրուած էր նրան ծանօթ կեռ վղոսկրէ թղթահատը:

Նստելով սեղանի առաջը, Նատալիա Իվանօվնան տոմսակ գրեց, եղբօրը, որով խնդրում էր նրան անպատճառ նոյն օրն և եթ գնալ իր մօտ, և զարմանքի արտայայտութեամբ գլուխը թափ տալով իր տեսածի վրայ՝ վերադարձաւ իրանց իջած հիւրանոյց:

Նատալիա Իվանօվնային այժմ եղբօր վերաբերմամբ երկու հարց էր հետաքրքրում, — նրա ամուսնութիւնը կատիւշայի հետ, որի մասին նա լսել էր իրանց քաղաքում, որովհետեւ ամենքը խօսում էին այդ բանի մասին, և այն: որ նա հողը տուել էր գիւղացիներին, որ նոյնպէս յայտնի էր ամենքին և որին շատերը քաղաքական ու վատանգաւոր նշանակութիւն էին տալիս կատիւշայի հետ ամուսնանալը մի կողմից գուր էր գալիս Նատալիա Իվանօվնային: Նա հիանում էր այդ վճռականութեան վրայ, այդ բանում ճանաչում էր նրան և իրան այնպէս, ինչպէս էին իրանք այն լաւ ժամանակները, երբ ինքը գեռ չէր ամուսնացած, բայց միենոյն ժամանակ նա սարսափում էր, երբ մտածում էր, որ իր եղբայրը պսակուելու է այդպիսի մի զարհուրելի կնոջ հետ: Վերջին զգացմունքը աւելի զօրեղ էր, և նա վճռեց որքան հնար էր ազդել եղբօր վրայ ու արգելք լինել նրա պսակուելուն, թէպէտե գիտէր, թէ որքան գժուար է այդ:

Իսկ միւս գործը, հողը գիւղացիներին տալը, այնքան էլ մօտ չէր նրա սրտին, բայց նրա ամուսնը սաստիկ վրդովեւում էր այդ բանից և պահանջում էր նրանից, որ ազգի եղբօր վըրայ: Իգնատիյ Նիկիֆորօվիչը ասում էր, որ չի կարող լինել աւելի անհիմն, աւելի թեթեամիտ ու գտուզ բան, քան Նեխիւզօվի այդ արածը, և որ նրա այդ վարմունքը կարելի է բացատրել — եթէ որ և է հնարաւորութիւն կայ բացատրելու — միմիայն աչ-

քի ընկնելու, պարծենալու, խօսակցութիւնների առիթ տալու ցանկութեամբ:

— Ի՞նչ միտք ունի տալ հողը գիւղացիներին այն պայմանով, որ նրանք վարձ վճարեն իրանք իրանց, — ասում էր նա: — Եթէ նա անպատճառ ուզում էր այդպիսի բան անել, կարող էր հողը ծախել գիւղացիներին գիւղական բանկի միջոցով: Այդ մի բանի նման կը լինէր: Առասարակ նրա արածը խելագարութեան մօտեցող մի բան է, — ասում էր իգնատիյ Նիկիֆորօվիչը, արդէն մտածելով խնամակալութիւն նշանակել տալու մասին, և պահանջում էր կնոջից, որ նա լուրջ կերպով խօսի եղբօր հետ նրա այդ տարօրինակ դիտաւորութեան մասին:

XXX

Տուն վերադառնալով և սեղանի վրայ քրոջ տոմսակը տեսնելով, Նեխիլիովը իսկոյն և եթ գնաց նրա մօտ երեկոյ էր արդէն, իգնատիյ Նիկիֆորօվիչը հանգստանում էր միւս սենեակում, այնպէս որ միայն քոյրը հանգիպեց Նեխիլիովին: Նա սկ մետաքսէ զգիստով էր ու կարմիր հանգոյց ունէր կրծքին և սկ մազերը փուչ-փուչ էր ածել ու սանրել մօդայաձև: Նա ակներեաբար աշխատում էր ջահէլ կերպարանք ստանալ իր հասակակից ամուսնուն պառաւ չերեալու համար: Եղբօրը տեսնելով՝ նա վեր թռաւ բազմոցից ու արագ քայլերով դուրս եկաւ նրան ընդ առաջ, իշխացնելով մետաքսէ շըշազգեստը: Նրանք համբուրուեցին և մատալով նայեցին միմեանց: Տեղի ունեցաւ հայեցքների այն իսորհրդաւոր, խորիմաստ փոխանակութիւնը, որի մէջ ամեն ինչ ճշմարիտ էր, և սկսուեց բառերի փոխանակութիւն, որի մէջ արդէն չը կար նոյն ճշմարտութիւնը: Նրանք չէին տեսնուել իրանց մօր մահից ի վեր:

— Դու հաստայել ու ջահէլացել ես, — ասաց Նեխիլիովը: Քրոջ շրթունքները կուչ եկան ուրախութիւնից:

— Իսկ դու նիհարացել ես:

— Հասկա ուր է իգնատիյ Նիկիֆորօվիչը, — հարցրեց Նեխիլիովը:

— Հանգստանում է: Գիշերը չի քնել:

Շատ բան կար այդտեղ ասելու, բայց բառերը ոչինչ չասացին, իսկ հայեացքները ասացին, որ այն, ինչ որ պէտք էր ասել, չասուեց:

— Ես եկայ քո մօտ:

— Հա, դիտեմ: Ես տանից գուրս եմ եկել: Շատ մեծ է իսձ համար, միայնակ եմ զգում ինձ այնաեղ ու սիրում է:

Ինձ այստեղի բաներից ոչինչ պէտք չի, բոլորը ինչ կայ չը կայ վեր առ քեզ:

—Հա, Ազրագենա Պետրօվսան ասաց ինձ, Ես գնացել էի այստեղ, Շատ չնորհակալ եմ: Բայց...

Այդ միջոցին հիւրանոցի ծառան ներս բերեց թէյի արծաթէ սարբը:

Նրանք լուռ մնացին, մինչ ծառան դարսում էր թէյի սարբը: Նատալիա Խվանօվսան գնաց նստեց սեղանի առջևի բաղկաթուի վրայ ու թէյը գցեց առանց խօսելու: Լուռ էր նաև Նեխլիւդովու:

—Ես արդէն ամեն բան գիտեմ, Դմիտրիյ, —վճռաբար ասաց Նատաշան, նայելով նրան:

—Շատ ուրախ եմ, որ գիտեա:

—Բայց միթէ դու յոյս ունես ուղղել նրան՝ այնպիսի կեանք անցկացնելուց յետոյ, —ասաց Նատալիա Խվանօվսան:

Նեխլիւդովը առանց կաթնելու, ուղիղ նստած էր փոքրիկ աթոռի վրայ և ուշադրութեամբ լսում էր քրոջը, այխատելով լւա հասկանալ նրա ասածը ու լւա պատասխանել: Այն տրամադրութիւնը, որ զարթեցրել էր նրա մէջ Մասլովայի հետ ունեցած վերջին տեսակցութիւնը, դեռ շարունակում էր լցնել նրա հոգին անդորր բերկրութեամբ և բարեացակամութեամբ դէպի բոլոր մարդիկ:

—Ես ուզում եմ ուղղել ոչ թէ նրան, այլ ինձ, —պատասխանեց նա:

Նատալիա Խվանօվսան հոգոց քաշեց:

—Դրա համար ուրիշ միջոցներ կան բացի ամուսնութիւնից:

—Իսկ իմ կարծիքով, այդ աւելի լւա միջոց է. բացի գրանից, այդ ինձ կը մտցնի այն աշխարհը, ուր ես կարող եմ օդակար լինել:

—Զեմ կարծում, —ասաց Նատալիա Խվանօվսան, —որ դու կարողանաս այդպիսով բախտաւոր լինել:

—Հարցը իմ բախտաւորութեան մէջ չէ:

—Ի հարկէ. բայց նա էլ, եթէ սիրտ կայ կրծքումը, չի կարող բախտաւոր լինել... չի կարող նոյն իսկ ցանկանալ այդ բանը:

—Նա չի էլ ցանկանում:

—Հասկանում եմ, բայց կեանքը...

—Հը, կեանքը...

—Ուրիշ բան է պահանջում:

—Կեանքը ոչինչ չի պահանջում, բացի նրանից, որ մենք

անենք այն, ինչ որ պէտք է անել, — ասաց Նեխիւդօվը, նայեւ լով նրա գեռ ևս գեղեցիկ, թէս աշքի ու բերանի չուրջը մանր խորշոմներով ծածկուած դէմքին:

— Չեմ հասկանում, — ասաց քոյրը, հոգոց քաշելով:

« Անդ քոյրիկս: Ի՞նչքան փիսուել է», — մտածում էր Նեխիւդօվը, մտաբերելով նատաշային այնպէս, ինչպէս նա ամուսնանալուց առաջ էր, և զգալով նրա վերաբերմամբ մի տեսակ քնքոյց զգացմունք, հիւսուած անթիւ մանկական յիշողութիւններից:

Այդ միջոցին սենեակը մտաւ, ինչպէս միշտ՝ լայն կուրծքը դուրս ցցած ու զլուկիր բարձր պահելով, կակուղ ու թեթի քալելով և ժպատալով, իգնատիյ Նիկիֆորօվիչը, իր փայլուն սի միրուքով, ճաղատ զլխով ու ակնոցներով:

— Բարե ձեզ, բարե ձեզ, — ասաց նա, գիտակցաբար անընական շեշտեր դնելով բառերի վրայ:

(Ամուսնութեան սկզբի ժամանակները փեսայ ու աներորդի աշխատում էին « գուռ»-ով խօսել, բայց այդ չը յաջողեց նրանց և նրանք շարունակեցին « գուռ»-ով խօսել):

Նրանք սղմեցին միմեանց ձեռք, և իգնատիյ Նիկիֆորօվիչը թեթև կերպով ընկաւ բազկաթողի վրայ:

— Հո չեմ խանգարում ձեր խօսակցութիւնը:

— Ոչ, ես ոչ ոքից չեմ թագցնում ասածս ու արածս:

Հէնց որ Նեխիւդօվը տեսաւ այդ դէմքը, այդ մազոտ ձեռները և լսեց խօսելու այդ հովանաւորիչ ու անձնապաստան եղանակը, հեզ արամադրութիւնը իսկոյն չքացաւ:

— Հա, մենք խօսում էինք սրա դիտաւորութեան մասին, — ասաց Նատալիա Խվանօվսան: — Թէյ ածեմ քեզ համար, — աւելացրեց նա, բռնելով թէյամանի կոթից:

— Այո, ինչդրեմ. ինչ դիտաւորութեան մասին էիր խօսում:

— Ուզում եմ Սիբիր գնալ կալանաւորների այն խմբի հետ, որի մէջ գտնուում է մի կին, որի առաջ ես ինձ մեղաւոր եմ համարում, — ասաց Նեխիւդօվը:

— Իմ լսածովս, գուք մտադիր էք ոչ միայն ուղեկցել, այլ և աւելի:

— Այո, ամուսնանալ, եթէ միայն նա համաձայնի:

— Այդպէս: Բայց եթէ ձեզ անախորժ չէ, բացատրեցէք ինձ ձեր շարժառիթներս: Ինձ համար նրանք անհասկանալի են:

— Շարժառիթներս այն են, որ այդ կինը... որ նրա առաջին քայլերը անառակութեան շաւիդում... — Նեխիւդօվը բարկացաւ ինքն իր վրայ, որ չէր կարողանում գտնել պէտք եղած

խօսքերը.—Շարժառիթներս այն են, որ մեղաւորը ես եմ, իսկ նա է պատժուել:

—Եթէ նրան պատժել են, ուրեմն, հաւանականօրէն, նա անմեղ չէ:

—Նա կատարելապէս անմեղ է:

Եւ նեխլիւդովը անտեղի յուզմունքով պատմեց ամբողջ գործը:

—Այս, նախագահովը սխալուել է և երդուեալ ատենակալները առանց լաւ մտածելու են պատախանել, Բայց այդպիսի դէպէերի համար սենատ կայ:

—Սենատը մերժեց:

—Իսկ եթէ սենատը մերժել է, կը նշանակի բեկանման հիմնական առիթներ չեն եղել,—սասաց իգնատիյ Նիկիֆորօվիչը, ակներևաբար այն յայտնի համոզմունքը դաւանելով, թէ ձմարտութիւնը դատախոսութեան արդիւնքն է:—Սենատը չի կարող քննել գործը ըստ էութեան: Իսկ եթէ յիրաւի դատարանը սխալուել է, պէտք է խնդիրը տալ Բարձրագոյն անունով:

—Խնդիրը տուել ենք, բայց ոչ մի հաւանականութիւն չը կայ, որ յաջողութիւն ունենանք: Տեղեկութիւն կը հարցնեն մինհստրութիւնից, մինհստրութիւնը կը հարցնի սենատից, սենատն էլ կը կրկնի իր վճիռը: Եւ, ինչպէս միշտ, անմեղը պատժի կ'ենթարկուի:

—Նախ, մինհստրութիւնը հարց չի տայ սենատին, —ներողամիտ ժպիտով սասաց իգնատիյ Նիկիֆորօվիչը, —այլ դատարանից կը պահանջի իսկական գործը և, եթէ սխալ գտնի, իր կարծիքը կը յայտնի այդ իմաստով, իսկ երկրորդը, անմեղները երբեք չեն պատճեռում, կամ պատժեռում են միմիայն չափազանց բացառիկ դէպէերում: Պատժեռում են մեղաւորները, —առանց շտապելու և ինքնագոհ ժպիտով ասում էր իգնատիյ Նիկիֆորօվիչը:

—Իսկ ես հակառակ համոզմունքն եմ կայացրել, —սասաց նեխլիւդովը չարանալով փեսայի դէմ, —ես այն համոզմունքն եմ կայացրել, որ դատարանների դատապարտածների կէսից աւելին անմեղ է լինում:

—Ի՞նչպէս թէ անմեղ:

—Անմեղ՝ բառի բուն նշանակութեամբ, ինչպէս անմեղ է այդ կինը թունաւորութեան գործում: Ինչպէս անմեղ է բանասում բռնուած մի գիւղացի, որի հետ ես ծանօթացայ, սպանութեան գործում: Ինչպէս անմեղ են նոյնպէս բանասում բռնուած մայր ու որդի, որոնց քիչ էր մնում դատապարտէին հրկիգութեան համար, որ ինքը տանտէրն է արել:

—Ի հարկէ, խօսք չը կայ, միշտ եղել են և կը լինեն դա-

տական սիւալմունքներ։ Մարդկային հաստատութիւնը չի կարող կատարեալ լինել։

— Բայց գրանից ահագին թուով բանտարկեալներ կան, որոնք անմեղ են, որովհետեւ, որոշ միջավայրում կրթուած լինելով, յանցանք չեն համարում իրանց արածները։

— Ներեցէք, այդ անարդար բան էք ասում, ամեն մի գող գիտի, որ գողութիւնը լաւ բան չէ և որ չը պէտք է գողութիւն անել, գիտի, որ գողութիւնը անբարոյական բան է, — ասաց իզնատիյ Նիկիֆօրօվիչը, հանգիստ, անձնապաստան ու միշտ միւնոյն՝ փաքր ինչ արհամարհական ժպիտով, որ սաստիկ զրգը-ռում էք Նեխիլիւգօվին։

— Չէ, չը գիտի. Նրան ասում են՝ մի գողանար, իսկ նա տեսնում է և գիտի, որ զործարանատէրերը գողանում են նրա աշխատանքը, կարելով նրա վարձը, որ աստիճանաւորները շարունակ կողոպառում են նրան։

— Այդ ձեր ասածը հօ անիշխանականութիւն է, — հանգիստ կերպով բնորոշեց իզնատիյ Նիկիֆօրօվիչը աներորդու ասածների իմաստը։

— Ես չը գիտեմ թէ ինչ է, բայց ասում եմ այն, ինչ որ կայ, — շարունակեց Նեխիլիւգօվը։ — Նա գիտի, որ աստիճանաւորները կողոպառում են նրան։ Գիտի, որ մենք, հողատէրերս, տիրում ենք հողին, որ պէտք է ընդհանուրին պատկանի, իսկ յետոյ երբ նա չոր ճիւղքեր է ժողովում իր վառարանը վառելու համար, մենք նրան բանան ենք գյում և ուզում ենք հաւատացնել, որ նա գող է։

— Չեմ հասկանում ձեր ասածը, իսկ որքան հասկանում եմ, համաձայն չեմ։ Հողը չի կարող մէկն ու մէկի սեփականութիւնը չը լինել, Եթէ վերցնէք ու հողը բաժանէք ամենքի մէջ, — սկսեց իզնատիյ Նիկիֆօրօվիչը լիովին ու անկասկած հաւատացած լինելով, որ Նեխիլիւգօվը սօցիալիստ է և որ սօցիալիստութեան պահանջները այն են, որ հողը հաւասար բաժանեն ամենքի մէջ, մինչդեռ այդ շատ յիմար միտք է և ինքը կարող է հեշտութեամբ հերքել այդ միտքը, — Եթէ դուք այսօր բռնէք բաժաննէք հողը ամենքի մէջ, վաղը դարձեալ նա կ'անցնի աւելի աշխատասէրների ու ընդունակների ձեռքը…

— Ոչ ոք չի առաջարկում հողը հաւասար բաժանել։ Հողը չը պէտք է ոչ ոքի սեփականութիւն լինի, չը պէտք է առուծախսի կամ փոխատութեան առարկայ լինի։

— Սեփականութեան իրաւունքը բնածին է մարդու։ Առանց սեփականութեան իրաւունքի ոչ ոք ցանկութիւն չի ունենայ հողը մշակելու։ Ոչնչացրէք սեփականութեան իրաւունքը

և մենք նորից կ'ընկնենք վայրենի վիճակի մէջ,—հեղինակաբար արտասանեց իգնատիչ նիկիֆօրօվիչը:

—Ըսդհակառակը, միայն այն ժամանակ հողը այնպէս անմշակ չի մնայ, ինչպէս այժմ:

—Լսեցէք, Դմիտրիյ իվանովիչ, չէ որ այդ կատարեալ անմտութիւն է: Միթէ կարելի է մեր ժամանակ ոչնչացնել հողատիրութեան իրաւունքը: Ես գիտեմ, այդ էշը դուք վազուց էք քշում: Բայց թոյլ տուէք ինձ ուղղակի ասել ձեզ...—Եւ իգնատիչ նիկիֆօրօվիչը գունատուեց, ու ձայնը դողաց. ակներն էր, որ այդ հարցը շատ մօտ էր նրա սրտին:—Ես ձեզ խորհուրդ կը տայի լաւ կշռադատել այդ հարցը, նախ քան նրա գործնական լուծման ձեռնարկելը:

—Դուք խօսում էք իմ անձնական գործերի մասին:

—Եյտ Ես կարծում եմ, մենք բոլորս դրուած ենք որոշ պայմանների մէջ և պէտք է կատարենք այն պարտականութիւնները, որոնք են այդ դրութիւնից, պէտք է պահպանենք կենցաղավարութեան այն պայմանները, որոնց մէջ մենք ծնուել ենք, որ ժառանգել ենք մեր նախորդ սերունդներից և որ պէտք է կտակինք մեր յաջորդ սերունդներին:

—Ես իմ պարտականութիւնն եմ համարում...

—Եերեցէք, —շարունակեց իգնատիչ նիկիֆօրօվիչը, թոյլ տալով ընդհատել իր խօսքը:—Ես ինձ ու իմ երեխաների համար չեմ խօսում: Իմ երեխաների վիճակը ապահովուած է, և ես այնքան եմ վաստակում, որ մենք ապրում ենք—յոյս ունեմ, երեխաներս էլ կ'ապրեն—առանց կարօտութեան, ուստի և իմ բողոքը ձեր, թոյլ տուէք ասել ոչ լիովին կշռադատուած վարժունքների դէմ չի բղխում անձնական շահի տեսակէտից, այլ ես ուղղակի սկզբունքով չեմ կարողանում համաձայնել ձեզ հետ: Եւ խորհուրդ կը տայի ձեզ աւելի ես մտածել, աւելի ես կարդալ...

—Խնդրեմ թոյլ տաք, որ ես ինքս վճուեմ իմ գործերը և ինքս դատեմ, թէ ինչ պէտք է կարդամ ու ինչ չը պէտք է կարդամ:—գունատուելով, ասաց Նեխիլիւգօվը և զգալով, որ ձեռքերը սկսում են սառել և ինքը այլ ես անկարող կը լինի զսպել իրան, լոեց ու սկսեց թէյ խմել:

XXXI

—Երեխաներն ինչպէս են, —հարցրեց Նեխիլիւգօվը քրոջից, մի քիչ հանգստանալուց յետոյ:

Քոյլը պատմեց երեխաների մասին, թէ նրանք մնացել են

տատի մօտ, և սաստիկ ուրախանալով, որ եղբօր ու ամուսնու վէճը վերջացաւ, սկսեց պատմել, թէ ինչպէս իր երեխաները ճանապարհորդութիւն են խաղում, իսկ և իսկ այնպէս, ինչպէս նա, Դմիտրին, փոքր ժամանակը խաղում՝ էր իր երեք տիկենիների, սև արարի ու ֆրանսունի կոչուող տիկենիկի հետ:

—Միթէ յիշում ես, —ասաց Նեխլիւդովը ժպտալով:

—Եւ երեակայիր, նրանք իսկ և իսկ քեզ պէս են խաղ անում:

Անախորժ խօսակցութիւնը վերջացաւ: Նատաշան հանգըստացաւ, բայց չէր ուզում ամուսնու մօտ խօսել այն բանի մասին, որ հասկանալի էր միայն եղբօր համար, ուստի, ընդհանուր խօսակցութիւն սկսելու համար, խօսք բաց արեց պիտերուրգեան նորութեան մասին, մենամարտութեան մէջ սպանուած միամօր զաւակ Կամենսկիցի մօր վշտի մասին:

Իգնատիյ Նիկիֆորօվիչը իր դժգոհութիւնը յայտնեց այն օրէնքի դէմ, որով մենամարտութեան միջոցին կատարուած սպանութիւնը դուրս է հանում ընդհանուր եղեռնագործութիւնների շարքից:

Նեխլիւդովը առարկեց նրա այդ նկատողութեանը, և դարձեալ նոյն նիւթի մասին վէճ սկսուեց, որի ժամանակ ամեն ինչ թերատ էր ասում, ու խօսակիցները ինչպէս հարկն է չարտայցտեցին իրանց միտքը, այլ երկուսն էլ մուացին իրանց՝ միմեանց գոխսադարձաբար դատապարտող համոզմունքներովը:

Իգնատիյ Նիկիֆորօվիչը զգում էր, որ Նեխլիւդովը դատապարտում է նրան, արհամարհելով նրա ամբողջ գործունէութիւնը, և նա ուզում էր ցոյց տալ Նեխլիւդովին, որ նրա դատողութիւնները միանգամայն անարդար են: Իսկ Նեխլիւդովը, բացի այն, որ զայրանում էր, թէ ինչու է վեսան խառնըւում իր հողային գործերի մէջ (սրաի խորքում նա զգում էր, որ փեսան ու քոյրը և նրանց երեխաները, իբր նրա ժառանգները, իրաւոնք ունեն խառնուելու այդ հարցում), սաստիկ վրդովում էր այն բանից, որ այդ սահմանափակ մարդը կատարեալ հաւաստիութեամբ ու հանգստութեամբ շարունակում էր կանոնաւոր ու օրինաւոր համարել այն բանը, որ այժմ անկասկածօրէն անմիտ էր թւում Նեխլիւդովին: Այդ ինքնավստահութիւնը գրգռում էր Նեխլիւդովին:

—Ի՞նչ կարող էր անել դատապարնը, —հարցրեց Նեխլիւդովը:

—Մենամարտողներից մէկին, ինչպէս սովորական մարդասպանի, կը դատապարտէր տաժանակիր աշխատանքների:

Նեխլիւդովի ձեռները դարձեալ սառեցին, ու նա սկսեց տաք-տաք խօսել.

— Շատ լաւ, ինչ դուրս կը գար դրանից:

— Արդարութիւն:

— Կարծես թէ արդարութիւնն է դատարանի գործունէութեան նպատակը, — ասաց Նեխլիւդովի:

— Հապա ինչ է դատարանի նպատակը:

— Դատակարգային շահերի պաշտպանութիւնը, Դատարանը, իմ կարծիքով, միմիայն մի միջոց է պահպանելու համար իրերի այն կարգը, որ ձեռնտու է մեր դասակարգին:

— Այդ բոլորովին նոր հայեացք է, — հանգիստ ժպիտով ասաց իգնատիյ Նիկիֆօրօվիչը: — Սովորաբար մի փոքր ուրիշ նշանակութիւն են վերագրում դատարանին:

— Տեսականորէն և ոչ թէ գործնականապէս, ինչպէս ես ախայ ու համոզուեցի, Դատարանի նպատակն է միմիայն պահպանել հասարակութիւնը իր ներկայ վիճակում և այդ բանի համար հալածել ու պատժել թէ նրանց, որոնք բարձր են ընդհանուր մակերեսոյթից և ուղղում են բարձրացնել նրան, և թէ նրանց, որոնք յած են այդ մակերեսոյթից:

— Զեմ՝ կարող համաձայնել, նախ և առաջ, այն մտքի հետ, թէ յանցաւորները պատժի են ենթարկուում այն պատճառով, որ բարձր են միջին մակերեսոյթից: Մեծ մասամբ դրանք հասարակութեան թափիթփութեներն են, ոոյնքան վիշացած, թէպէտ փոքր ինչ ուրիշ կերպ, որքան և այն յանցաւոր տիպերը, որոնց դուք միջին մակերեսոյթից յած էք համարում:

— Ես գիտեմ այնպիսիներին, որոնք անհամեմատ բարձր են, քան իրանց դատաւորները:

Բայց իգնատիյ Նիկիֆօրօվիչը, այնպիսի մարդու սովորութեամբ, որի խօսքը չեն ընդհատում երբեք, չէր լսում Նեխլիւդովի ասածը և, դրանով առանձնապէս զրգուելով Նեխլիւդովին, շարունակում էր խօսել միաժամանակ Նեխլիւդովի հետ:

— Զեմ՝ կարող համաձայնել նաև այն մտքի հետ, թէ դատարանի նպատակն է պահպանել իրերի ներկայ կարգը: Դատարանը իր յատուկ նպատակներն ունի, այն է կամ ուղղել...

— Լաւ են ուղղում բանաերում, — վրայ բերեց Նեխլիւդովի:

— Կամ դուրս գցել, — յամառութեամբ շարունակում էր իգնատիյ Նիկիֆօրօվիչը, — Փչացածներին և այն գազանանման մարդկանց, որոնք վունդ են սպառնում հասարակութեան գոյութեանը:

— Բանն էլ հէնց այն է, ՀXII

է անում, ոչ միւսը: Հասարամնելու:

— Էր Մասովան, պէտք է երկաթուարն ընկնէր ժամի 3-ին, ուստի Նեխլու ոը դնալ 12-ից առաջ, որպէս զի այն-

— ի՞նչպէս թէ չունի: Չեմ հասկանում,—գոռով ժպտակով
հարցրեց իդնատիյ Նեկիֆօրօվիլիք:

— Ուզում եմ ասել, որ իսկապէս կան միմիայն երկու բա-
նական պատիմներ, այն, որոնք գործ էին դրւում հնումը,—
մարմնական պատիմ ու մահապարտութիւն,—բայց որոնք,
բարքերի մնջմացման չնորհիւ, հետզհետէ աւելի ու աւելի գործ
են գալիս գործածութիւնից,—ասաց Նեկիլիդօվր:

— Ահա այդ և նոր բան է, և զարմանալի է լսել ձեզանից:

— Այո, բանական բան է ցաւ պատճառել մարդուն, որ-
պէս զի նա այլ ևս չանի այն, ինչի համար որ ցաւ պատճառե-
ցին նրան, և բոլորովին բանական է՝ զիսատել հստարակու-
թեան վնասակար, վտանգաւոր անդամին Այդ երկու պատիմ-
ներն էլ բանական իմաստ ունեն Բայց ինչ իմաստ ունի պա-
րապութեան ու վատ օրինակի չնորհիւ փչացած մարդուն փա-
կել բանտում, ապահովուած ու պարտագիր պարագութեան
պայմաններում և ամենափշացած մարդկանց ընկերութեան մէջ,
կամ թէ, չը գիտեմ ինչու, պետական հաշուով տանել նրանց—
ամեն մէկը 500 ոռուբուց աւելի է նստում—Տուլայի նահանգից
իրկուտսկի նահանգը, կամ Կուրսկի նահանգից...

— Եւ սակայն մարդիկ վախենում են պետական հաշուով
կատարուող ճանապարհորդութիւնից, և եթէ այդ ճանապար-
հորդութիւններն ու բանտերը չը լինէին, մենք այժմ այսպէս
մեզ համար համգիստ նստած չէնք խօսի այստեղ:

— Այդ բանտերը չեն կարող մեզ ապահովել վտագներից,
որովհետև կալանաւորները անվերջ չեն մնում այստեղ, նրանց
բաց են թողնում: Ընդհակառակը, այդ հիմնարկութիւններում
այդ մարդկանց հասցնում են արատաւորութեան ու անառա-
կութեան ծայրայեղ աստիճանին, այսինքն, սաստկացնում են
վտանգը:

— Դուք ուզում եք ասել, թէ պէտք է կատարելագործել
բանտային սիստեմը:

— Կատարելագործել անկարելի է: Կատարելագործուած
բանտերը աւելի փող կը նստէին, քան այն, որ ծախսում է
ժողովրդական կրթութեան վրայ, և մի նոր ծանրութիւն կը
լինէին նոյն ժողովրդի վզին:

— Բայց բանտային սիստեմի պակասութիւնները չեն կա-
րող ամենահաջար կարգացնել դատարանի նշանակութիւնը, — դար-
ձե...

— Մենամարտողներից մէկին ականջ դնելու՝ շարունակում
սպանի, կը դատապարտէր տաժան.

Նեկիլիդօվի ձեռները դարձեալ ասութիւնները, — ասում եք
սովորապէս խօսել.

— Ուրեմն, ձեր ասելով, պէտք է սպանել յանցաւորներին, կամ, ինչպէս առաջարկում էր մի պետական գործիչ, հանել նրանց աչքերը, —ասաց իգնատիյ Նիկիֆօրօվիչը յաղթական կերպով ժպտալով:

— Այս, այդ անգութ բան կը լինէր, բայց նպատակայար- մար կը լինէր, իսկ այն, ինչ որ այժմ անւում է, թէ անգութ է և թէ աննպատակայարմար:

— Իսկ ես մասնակցում եմ այդ բանին —ասաց իգնատիյ Նիկիֆօրօվիչը գունատուելով:

— Այդ ձեր գործն է, Բայց ես չ' մ հասկանում այդ:

— Ես կարծում եմ, որ դուք շատ բան չեք հասկանում, — ասաց իգնատիյ Նիկիֆօրօվիչը գողդոջուն ձայնով:

— Մի անգամ ես տեսայ զատարանում, թէ ինչպէս գատա- խաղի օգնականը իր բոլոր ոյժերով աշխատում էր մեղադրել տալ մի թշուառ տղայի, որ ամեն մի չը խեղաթիւրուած մար- դու մէջ կարող էր միմիայն կարնկցութիւն զարթեցնել...

— Ես չէի ծառայի, եթէ այդ կարծիքին լինէի, — ասաց իգնատիյ Նիկիֆօրօվիչը ու վեր կացաւ տեղիցը:

Նեխլիւգովը մի առանձին փայլ տեսաւ ինսայի ակնոցների տակ: «Միթէ արցունք է այդ», մտածեց Նեխլիւգովը, Եւ յիրա- ւի, վիրաւորուած ինքնասիրութեան արցունքներ էին այդ: Իգ- նատիյ Նիկիֆօրօվիչը, մօտենալով պատուհանին ու հազարով հանեց թաշկինակը ու սկսեց սրբել ակնոցները և յետոյ, հանե- լով ակնոցները, սրբեց նաև աչքերը: Վերադառնալով իր տեղը՝ Իգնատիյ Նիկիֆօրօվիչը սկսեց ծխել ու այլ ես ոչինչ չասաց: Նեխլիւգովը կակիծ ու ամօթ էր զգում, որ այդ աստիճան վըշ- տացրեց փեսային ու քրոջը, մանաւանդ որ փաղը գնալու էր ու այլ հս չէր տեսնուելու նրանց հետ: Սյլայլուած զրութեամբ նա մնաս բարեւ արեց նրանց հետ ու գնաց տուն:

«Շատ կարելի է, որ ասածս ճիշտ էր, — գոնէ նա ոչինչ չառարկեց ինձ: Բայց այդպէս չը պէտք էր ասել: Կը նշանակի շատ քիչ եմ փոխուել ես, որ կարողացայ այդքան գրաւուել շար զգացմունքով և այդպէս վիրաւորել նրան ու վշտացնել խեղճ նատաշային», մտածում էր նա:

XXXII

Այն խումբը, որի մէջն էր Մասովան, պէտք է երկաթու- զու կայարանից ճանապարհ ընկնէր ժամի 3-ին, ուստի Նեխլ- իւգովը վճռել էր բանտը գնալ 12-ից առաջ, որպէս զի այն-

տեղ լինէր այն ժամանակ, երբ խումբը դուրս էր գալու, և կալանաւորների հետ միասին գնար կայարանը,

Բաներն ու թղթերը գարսելիս, Նեխիլիւղօվը կանգ առաւ իր յիշատակարանի վրայ, կարգաց մի քանի տեղ և այն, ինչ որ գրել էր վերջին անգամը: Վերջին անգամը՝ Պետերբուրգ գնալուց առաջ նա գրել էր հետեւելը. «Կատիւշան չի ուզում, որ ես զոհաբերութիւն անեմ, այլ ինքն է ուզում անել: Եա յաղթեց, ես էլ յաղթեցի նա ուրախացնում է ինձ: այն ներքին փոփոխութեամբ, որ, թւում է ինձ,—վախենում եմ հաւատալ, —կատարում է նրա մէջ: Վախենում եմ հաւատալ, բայց ինձ թւում է, թէ նա վերակենդանանում է»: Նոյն երեսում այդ կտորից յետոյ, զգուած էր. «Շատ ծանր և շատ բերկան լից զգացմունքներ զգացի: Իմացայ, որ նա լաւ չի պահել իրան հիւանդանոցում: Եւ յանկարծ սիրոս սարսաւ փելի կակծաց: Զէի կարող կարծել, թէ սիրոս այդքան կը կակծաց նրա համար: Զգուանքով ու ատելութեամբ խօսեցի նրա հետ և յետոյ յանկարծ յիշեցի ինձ, յիշեցի այն, թէ քանի-քանի անգամ ես ինքս մեղաւոր եմ եղել և նոյն իսկ այժմ, թէպէտ և միայն մարզումս, մեղաւոր եմ լինում այն բանում, որի համար ատում էի նրան, և յանկարծ միւնոյն ժամանակ և՛ զգուանք զգացի գէպի ինքս ինձ, և՛ խղճահարութիւն նրա վերաբերմամբ, ու քաղցր տրամադրութիւն եկաւ վրաս: Ո՛րքան բարի կը լինէինք մենք, եթէ կարողանայինք միշտ ժամանակին տեսնել գերանը մեր ազգում»: Այդ օրը նա գրել էր. «Գնացել էի կատիւշի մօտ և հէնց այն պատճառով, որ գոհ էի ինձանից, բարի չէի, չար էի նրա վերաբերմամբ, և դուրս եկայ բանտից ծանր զգացմունքով: Ե՞ն, ինչ արած: Վաղուանից նոր կեանք է սկսուելու: Մնաս բարե իմ հին կեանք, մնաս բարե ընդ միշտ: Շատ տպաւորութիւններ է հաւաքուել մէջս, բայց գնու չեմ կարողանում բոլորը ի մի վերածել»:

Միւս առաւօտը որ զարթնեց, առաջին բանը, որ զգաց Նեխիլիւղօվը, զղջումն էր իր ու փեսայի մէջ պատճաճի առիթով:

«Այսպէս չի կարելի բաժանուել,—մտածեց նա, —պէտք է գնալ նրանց մօտ և ուղղել երէկուայ արածս»:

Բայց, նայելով ժամացոյցին, անսաւ, որ այլ ևս ժամանակ չի մնացել ու պէտք է շտապել խմբի գուրս զալուն հասնելու համար: Վոազ-վոազ կապելով բաները և ուղարկելով կայարանը դռնապանի ու ֆերուսեայի ամուսին Տարասի հետ, որ հետը գնալու էր Սիբիր, Նեխիլիւղօվը վարձեց սոսաջին պատճաճ

կառապանին ու գնաց բանտը։ Պօստային գնացքը, որով գնաւու էր Նեխլիւտօվը, դուրս էր գալու կալանաւորների գնացքից երկու ժամ յետոյ, ուստի նա հաշիւները վերջնականապէս մաքրեց համարներում, չուզելով այլ ևս վիրագառնալ այնտեղ։

Յուլիսեան ծանր շոփեր էր անում։ Փողոցների ու աների քարերը և կտուրների երկաթէ ծածկերը, որովք չէին հովացել տօթային դիշերուայ ընթայքում, իրանց տաքութիւնը հաղորդում էին ջերմ, անշարժ օդին, Քամի չը կար, իսկ երբ բարձրանում էր, փոշիով լիքը ու իւղային ներկի գարշահոտութեամբ տոգորուած տաք օդ էր բերում հետաք, Մարդ քիչ կար փողոցներումը. Կղածներն էլ աշխատում էին աների շուաքովը գնալը Միայն արելից սեացած տրեխաւոր սալայատակող գիւղացիներն էին, որ փողոցների մէջտեղում նստած խճաքարեր էին խրում տաքացած աւաղի մէջ ու մուրճերով պնդացնում, մէկ էլ մոայլ փողոցային սոստիկանները, որոնք, իրանց անթափ կիտէներով ու ոէվոլվէրների նարնջագոյն դերձաններով, փողոցների մէջտեղում կանգնած ախուր-տմուր փոխում էին ոտաները, և արեի կողմից վարագուրուած ձիաքարչները, որոնք զրնգգրնզացնելով անց ու դարձ էին անում փողոցներում և որոնց ձիերի ականջները դուրս էին ցցուած սպիտակ գլխանոցների ծակերի միջից։

Երբ Նեխլիւտօվը մօտեցաւ բանտին, կալանաւորների խումբը գեռ չէր դուրս եկել և բանտում գեռ շարունակուում էր ուղարկուող կալանաւորների յանձնումը և ընդունելութիւնը, որ ակսուել էր առաւօտուայ ժամի 4-ից։ Ուղարկուող խմբի մէջ կային 623 տղամարդիկ և 64 կանաքը. պէտք էր բոլորին ստուգել դուցակների համաձայն, ջոկել հիւանդներին ու թոյւերին և յանձնել ուղեկցող պահապաններին։ Նոր բանտապետը իր երկու օգնականներով, քժիշէրը, ֆէլչէրը, ուղեկցող պահակախմբի օֆիցիէրը և գրագիրը, նստած բակում պատասակի շուաքում դրուած սեղանի մօտ, որի վրայ գարսած էին թղթեր ու գրելու պարագաներ, մէկ-մէկ կանչում էին անունէանուն և զննում, հարց ու փորձի ենթարկում ու ցուցակագրում կալանաւորներին։

Սեղանի կէսի վրայ արդէն ընկնում էին արեի շողքերը. Սկսում էր սաստիկ շոք անել և մարդու շունչ կտրւում էր օդի անշարժութիւնից և մօտում խմբուած կալանաւորների չնչառութիւնից։

—Ի՞նչ է, վերջ չի լինելու, —պապիրոսի ծովսը ներս ծծելով ասում էր բարձրահասակ, հաստիկի, կարմրերես, վեր քաշած ուսերով ու կարճիկ ձեռներով պահապանապետ օֆիցիէրը,

որ շարժունակ ծխում էր ու ծուխը գուրս թողնում բեխների միջով, որոնք բոլորովին ծածկում էին բերանը, — Հոգիներս համայնքն ու բարեղից էր այդքան հաւաքել դրանց, Շատ կայ զնու Գրագիշը նայեց ցուցակին:

— Դեռ քասն չորս հոգի տղամարդ է մնացել, բացի կանանցից:

— Դէ ի՞նչ էր կանգնել, մօտեցէք, — գոռաց օֆիցիրը դեռ չը ստուգուած կալանաւորների վրայ, որոնք հուալ էին եկել իրուր, Երեք ժամից աւելի կը լինէր, որ կալանաւորները այդպէս շարէշար կանգնած սպասում էին հերթին, այն էլ ոչ թէ ստուերում, այլ արեում:

Այդ տեղի էր ունենում բանտի բակում, իսկ դրսեր, դարպահ մօտ կանգնած էր ինչպէս միշտ, մի պահպան զինուոր, հրացանը ձեռքին, և բացի այդ՝ մօտ քասն սայլեր կալանաւորների բաների ու թոյլերի համար, իսկ անկիւնի մօտ խմբուած էին կալանաւորների ազգականները ու բարեկամները, որոնք սպասում էին նրանց գուրս գալուն, որ տեսնեն Սիրիո ուղարկուողներին և, եթէ կարելի լինի, խօսնեն հետները ու տան հետները բերած բան ու մանը: Նեխիլուգով էլ գնաց միացաւ այդ իրմբին:

Նա մնաց այդտեղ կանգնած մօտ մի ժամ: Մի ժամից յետոյ դարպասի յետից լսուեց շղթաների շաշիւն, ոտների թըփթըփոց, իշխանական ձայներ և մեծ բազմութեան հաղոց ու ցած խօսակցութիւն: Այդպէս տեսն մօտ հինգ բոպէ, որոնց ընթացքում դռնակով ներս ու գուրս էին անում վերակացուները, Վերջապէս, լսուեց օֆիցիրի հրամանը:

Դարպասը դղբդալով բացուեց, շղթաների զրնգոցը սկսեց աւելի պարզ լսուել, սպիտակ կիտէիներ հազած ուղեկցող զինուորները, հրացանները ձեռքերին, դուրս եկան փողոց և, ակներեաբար կատարելով մի լաւ ծանօթ ու սովորական բան, շարուեցին դարպասի առաջը, կանոնաւոր ու ընդարձակ շրջան կազմելով: Երբ որ նրանք տեղաւորուեցին, կրկին լսուեց օֆիցիրի հրամանը, և սկսեցին զոյդ-զոյդ գուրս գալ կալանաւորները, ածիլած գլուխներին դրած թասակներով, շալակները զցած տոպրակներով, քաշ տալով շղթալուած ոտները ու ճօճելով աղատ ձեռները, մինչդեռ միւս ձեռքով պահում էին շալակած տոպրակները: Առաջ գուրս եկան տաժանապարտ տղամարդիկ, բոլորն էլ միակերպ մոխրագոյն անդրավարտիքներով ու խալաթներով, որոնց մէջքերին կարած էր ասածն կտոր: Բոլորն էլ — ծեր ու ջահէլ, նիհար ու գէր, զունատ, կարմրերես ու սե, բեխաւոր, միրուքաւոր ու անմիրուք, ոռւս,

թուրք, հրէայ—դուրս էին գալիս, շղթաները զբնգացնելով ու ժիր կերպով ճօճելով ձեռները, կարծես պատրաստուելով զնալ ուր որ շատ հեռու տեղ, բայց, 10 քայլ անելուց յետոյ, կանգ էին առնում ու խոնարհ կերպով չորս-չորս շարւում իրար յետևից: Նրանց յետեից, անընդմիջաբար, դուրս թափուեցին նոյնպէս ածիլուած և նոյնպիս հագուստով տղամարդիկ, բայց առանց ոտնաշղթայի, այլ միայն ձեռնաշղթայով իրար կապած կրներով: Դրանք աքսորականներն էին, Նրանք էլ ժիր-ժիր դուրս էին գալիս, կանգ էին առնում ու նոյնպէս չորս-չորս շարւում իրար յետեից: Այսուհետեւ դուրս եկան հասարակական վճիռներով աքսորուածները, Յետոյ՝ կանաք, նոյնպէս կարգով, նախ՝ տաժանապարտները բանտային մոխրագոյն բաճկոններով ու զիսաշորերով, յետոյ՝ աքսորականներն ու յօժարակամ զնացողները իրանց քաղաքային կամ գիւղական հագուստներով: Կանանցից մի քանիսը բաճկոնների վէշի մէջ զրկած ունէին ծծկեր երեխաններ:

Կանանց հետ ոտքով գնում էին նաև երեխաններ՝ տղաներ ու աղջիկներ: Այդ երեխանները, ինչպէս քուուակները ձիերի ջոկերում, սղմուում էին կալանաւորուահիների արանքներին: Տղամարդիկ կանգնում էին լուռ, միայն երբեմն-երբեմն հազարով կամ ընդհատ նկատողութիւններ անելով իսկ կանանց մէջ լսւում էր անլուռ զրոյց: Նեխլիւդօվին թուաց, թէ ինքը տեսաւ Մասլօվային, երբ նա դուրս էր գալիս բանտից: բայց յետոյ նա կորաւ ուրիշների բազմութիւններ մէջ, և նեխլիւդօվը տեսնում էր միմիրան մոխրագոյն, կարծես մարդկային, մանաւանդ կանացի կերպարանքից զրկուած արարածների մի ահագին խոռմը, որոնք երեխանների հետ ու առպրակները շալակներին շարւում էին տղամարդկանց յետեին:

Չը նայելով, որ բոլոր կալանաւորներին հաշուել էին բանտի պատերի մէջ, այնուամենայնիւ ուղեկցող զինուորները սկըսեցին նորից հաշուել նրանց և նոր հաշիւը համեմատել առաջին հաշուի հետ: Այդ ստուգումը երկար տևեց, մանաւանդ այն պատճառով, որ կալանաւորներից մի քանիսը շարժւում էին, փոխելով տեղերը, և զրանով խառնում էին զինուորների հաշիւը: Զինուորները հայրոյում էին ու հրհրում՝ խոնարհ կերպով, բայց զայրացած սրտով հնազանդուող կալանաւորներին ու սկըսում էին նորից հաշուել: Երբ որ բոլորին նորից հաշուեցին պրծան, օֆիցէրը ինչ որ հրաման տուեց, և բազմութիւնը իրար անցաւ: Թոյլ տղամարդիկը, կանաք ու երեխանները, միմեանցից առաջ անցնելով, դիմեցին դէպի սայլերը ու սկսեցին դարսել

նրանց վրայ տուղրակները ու յետոյ ինքներն էլ սկսեցին բարձրանալ նստել, թարձրանում ու նստում էին ճուացող ծծկեր երեխաներ գրկած կանաքք, ուրախ ու տեղի համար իրար հետ կոռւող երեխաներ և մոռայլ ու վիատ կալանաւորներ:

Մի քանի կալանաւորներ, գլխարկները հանած, մօտեցան պահակախմբի օֆիցէրին ու սկսեցին ինչ որ մի բան ինդրել նրանից, ինչպէս յետոյ իմացաւ Նեխլիւդովը, նրանք ինդրում էին, որ իրանց էլ թոյլ տան նստել սայլերի վրայ, Նեխլիւդովը տեսնում էր, թէ ինչպէս օֆիցէրը լուս, առանց խնդրողին նայելու, ծծում էր պապիրոսի ծուփս և ինչպէս յետոյ յանկարծ կարճլիկ ձեռքը թափ տուեց շարքից գուրս եկած ու իրան մօտեցած մի կալանաւորի վրայ և ինչպէս այդ կալանաւորը, հարուածի վախից ածիլած գլուխը ուսերի մէջ քաշելով, փախաւ նրա մօտից:

—Ես քեզ այնպէս ազնուական կը դարձնեմ, որ կեանքումդ չես մոռանալ: Ոտով էլ լաւ տեղ կը հանես,—գոռաց օֆիցէրը:

Միայն մի օրօրուող երկարահասակ ծերունու, որ շղթայ ունէր ոտներին, օֆիցէրը թոյլ տուեց նստել սայլի վրայ, և Նեխլիւդովը տեսաւ, թէ ինչպէս այդ ծերունին, հանելով իր տափակ թասակը, խաչակնքում էր երեսը, գիմնլով գէպի սայլերը, և ինչպէս յետոյ երկար ժամանակ չէր կարողանում բարձրանալ սայլի վրայ շղթաների պատճառով, որոնք խանգարում էին բարձրացնել թոյլ, ծերունական, կաշկանդուած ոտը, և ինչպէս մի կին, որ արդէն նստել էր սայլի վրայ, օգնեց նրան, ձեռքից բնելով ու վեր քաշելով:

Երբ որ բոլոր սայլերը բարձեցին տուղրակներով ու տուղրակների վրայ նստեցին նրանք, որոնց թոյլ էր տուած այդ, օֆիցէրը գլխարկը հանեց, թաշկինակով սրբեց ճակատը, ճաղատ գլուխը և հաստ ու կարմիր վիզը ու երեսը խաչակնքեց:

—Մարշ, —հրաման տուեց նա:

Զինուորները չըխկացրին հրացանները, կալանաւորները, գլխարկները հանելով, —ումանք ձախ ձեռքով, —սկսեցին խաչ հանել երեսներին, ճանապարհ գնողները ինչ որ գոռացին, կալանաւորներն էլ ինչ որ գոռացին ի պատասխան, կանանց մէջ լաց ու կոծ բարձրացաւ և խումբը, շրջապատուած սպիտակաղդեստ զինուորներով, շարժուեց, փոշի բարձրացնելով շղթայակապ ոտներով, Առաջից գնում էին զինուորները, նրանց յետեց, ոտնաշղթաները զընգացնելով, տաժանապարտները՝ չորս-չորս ամեն մի շարքում, յետոյ աքսորականները, յետոյ հասարակական զնիւներով աքսորուածները, որոնք երկ-

երկու կապուած էին իրար ձեռնաշղթաներով, յետոյ կանաք։
Ամենքից վերջը գնում էին տոպարակներով ու թոյլ կալանաւոր-
ներով լիքը սոյլերը, որոնցից մէկի վրայ բարձր նստած էր մի
շորում կոլոլուած կին, որ շարունակ հեծկլտում էր ու հեկե-
կում։

XXXIII

Յուղարկախումբը այնքան երկար էր, որ տոպարակներով
ու թոյլերով լի սոյլերը միայն այն ժամանակ շարժուեցին տե-
ղից, երբ առաջին շարքերը արդէն ծածկուել էին տեսողու-
թիւնից։ Երբ սոյլերը շարժուեցին, Նեխլիւդօվը նստեց իրան
սպասող կառքը ու հրամայեց կառապանին խմբից առաջ անց-
նել, ուզելով տեսնել՝ հօ ծանօթ կալանաւորներ չը կան տղա-
մարդկանց մէջ և, բացի այդ, գտնել կանանց մէջ Մասլօվային
ու հարցնել թէ արդեօք ստացել է իրան ուղարկուած բաները։
Սկսեց սաստիկ շոք անել։ Քամի չը կար, և հազարաւոր ոտնե-
րի բարձրացրած փոշին ամբողջ ժամանակը կանգնած էր կա-
լանաւորների վրայ, որոնք գնում էին փողոցի մէջտեղով։ Կա-
լանաւորները արագ քայլերով էին գնում, և Նեխլիւդօվի վար-
ձած կառքի հասարակաքայլ ձին միայն դանդաղօրէն էր առաջ
անցնում նրանցից։ Շարք առ շարք գնում էին տարօրինակ ու
սարսափելի տեպով անծանօթ էակներ, շարժելով իրանց հա-
զարաւոր միակերպ հագնուած ոտները և քայլերին համաշափ
թափահարելով աղատ ձեռքերը, կարծես իրանք իրանց խրա-
խուսելու համար։ Այնքան շատ էին նրանք, այնքան միակերպ
էին նրանք և այնպիսի առանձնատեսակ ու տարօրինակ պայ-
մանների մէջ էին դրուած, որ Նեխլիւդօվին թւում էր, թէ
մարդիկ չեն այդ, այլ ինչ որ առանձնատեսակ, սարսափելի ա-
րարածները նրա այդ տպաւորութիւնը փարատուեց միայն նրա-
նով, որ նա տաժանապարտների բազմութեան մէջ տեսաւ մար-
դասպան Ֆեօդօրօվին և աքսորականների մէջ՝ կօմիկ Օխօտինին
ու մի թափառաշըլիկի, որ նոյնպէս գիմել էր նրա օդնութեան։
Գրեթէ բոլոր կալանաւորները գլուխները ծռում էին ու աչքի
պոչով նայում իրանցից սուած անցնող կառքին ու նրա մէջ
նստած պարոնին, որ ուշի ուշով գիտում էր նրանց։ Ֆեօդօրօվը
գլուխը թափ տուեց գէպի վերն ի նշան այն բանի, որ ինքը
ձանաչեց Նեխլիւդօվին։ Օխօտինը աչքով արեց։ Բայց ոչ մէկը,
ոչ միւսը չը բարեեցին, արգելուած համարելով գլուխ տալը։
Համանելով կանանց շարքերին, Նեխլիւդօվը իսկոյն և եթ տեսաւ
Մասլօվային։ Նա գնում էր կանանց երկրորդ շարքում։ Շարքի

ծայրումը գնում էր մի կարմրատակած, կարճոտանի, սևաչեայ, անձունի կին, որ խալաթի փեշերը քշտել, խրել էր զօտիկի մէջ, —Խօրօշավկան էր այդ. նրա կողքին գնում էր մի յղի կին, որ հագիւ հաղ էր քաշ տալիս ոտները, իսկ երրորդը՝ Մասլօվան էր, Նա տոպրակ ունէր շալակին և նայում էր ուղիղ իր առջեր. Դէմքը հանգիստ էր ու վճռական նոյն շարքի չորրորդը կարճ խալաթ հագած ու գլխաշորը գեղջկուհիավարի կապած մի ջանէլ ու սիրուն կին էր, որ ժիր-ժիր գնում էր Մասլօվայի կողքին, —այդ էլ Ֆեդոսեան էր Նեխլիւդովը իջաւ կառքից ու մօտեցաւ առաջ շարժուող կանանց, ուղելով հարցնել Մասլօվայից, թէ արդեօք ստացել է բաները և թէ ինչպէս է զգում իրան, բայց ուղեկցող պահակախմբի ունատէր-օֆիցէրը, որ այդ կողմիցն էր գնում, իսկոյն և եթ նկատեց նրան ու վաղէվազ եկաւ դէպի նա գոռալով.

—Պարոն, չի կարելի մօտենալ կալանաւորներին, արգելուած է:

Մօտենալով Նեխլիւդովին ու ճանաչնելով նրան (բանտում արդէն ամենքը ճանաչում էին նրան), ուտէր-օֆիցէրը մատները տարաւ դէպի գլխարկը ու, կանգ առնելով Նեխլիւդովի կողքին, ասաց.

—Այժմ չի կարելի: Կայարանում կարող էք, իսկ այստեղ թոյլ չի տրուում: Յետ մի ընկնէք, մարշ, —գոռաց նա կալանաւորների վրայ, և ժիր-ժիր, չը նայելով շռին, վազ տուեց իր տեղը իր նոր, պսպղան կօշիկներով:

Նեխլիւդովը վերադարձաւ դէպի մայթը և պատուիրելով կառապանին հետեւել իրան՝ շարունակեց ճանապարհը ոտով, կալանաւորներին համահաւասար, կալանաւորների խումբը փողոցներով անցնելիս ամեն տեղ կարեկցութեամբ ու սարսափով խօսն ուշադրութիւն էր դարձնում իր վրայ: Կառքով գընացողները դուրս էին մեկնուում կառքերից և, քանի դեռ կարող էին տեսնել կալանաւորներին, աշքով հետեւում էին նրանց: Ոտով գնացողները կանգ էին առնում և զարմացած ու վախուռուած նայում այդ սարսափելի տեսարանին: Ոմանք մօտենում էին ու ողորմութիւն էին տալիս: Ողորմութիւնը ընդունում էին ուղեկցող զինուորները: Ոմանք, հիանօզացածների նման, գնում էին խմբի յետեից, բայց յետոյ կանգ էին առնում և գլուխները թափ տալով մնում էին ու միմիայն աշքերով հետեւում խմբին: Շատերը փողոցադռներից ու դարպաններից, միմեանց ձայն տալով, դուրս էին վազում ու պատուհաններից կախ ընկնում և անշարժ ու լուռ նայում էին այդ սարսափելի գնացքին: Մի փողոցաբաժանքում խումբը խանգարեց անցնել

մի հարուստ կառքի։ Առջեռում նստած էր լպստած երեսով հաստաքամակ կառապանը, մէջքին երկու շարք կոճակներ կարսած, իսկ կառքի մէջ յետերի կողմում նստած էին մարդ ու կին. կինը, գունատ ու նիհար, բացգոյն գլխարկով ու վագգոյն հովանոցով, իսկ մարդը՝ ցիլինդրով ու բացգոյն շքեղ վերարկուով, Նրանց առջեր նստած էին նրանց երեխանները, — զուգած-զարդարած ու ծաղկի նման թարմ մի փարբեկ աղջիկ՝ բաց թողած շէկ մազերով, նոյնպէս վագգոյն հովանոցով, և մի ուժ տարեկան տղայ՝ երկար ու բարակ վզով և դուրս ցցուած անրակներով, գլխին դրած՝ երկար ժապաւէններով զարդարած նաւաստիական գլխարկ։ Հայրը բարկացած յանդիմանում էր կառապանին, որ նա չէր կարողացել ժամանակին կալանաւորների խմբի առաջիցը անցնել, իսկ մայրը զզուանքով պշում էր աչքերը ու կնճում դէմքը, արեից ու փոշուց պատսպարուելով մետափսէ հովանոցով, որ բոլորովին քաշել էր երեխին։ Հաստաքամակ կառապանը բարկացած խոժուում էր, անարդար յանդիմանութիւններ լսելով պարոնից, որ ինքն էր հրամայել նրան տանել այդ փողոցով, և դժուարութեամբ էր կարողանում պահել գլխակապի ու վզի տակին փրփրակալած սևաթոյր նժոյգներին, որոնք իրանց կարատում էին առաջ գնալու համար։

Փողոցապահ ոստիկանը ի բոլոր սրտէ ուզում էր ծառայութիւն մատուցանել հարուստ կառքի տիրոջը ու ճանապարհ տալ նրան, կանգնեցնելով կալանաւորներին, բայց զգում էր, որ այդ գնացքի մէջ ինչ որ մոայլ հանդիսաւորութիւն կար, որ չէր կարելի խանգարել նոյն իսկ այդպիսի հարուստ պարոնի համար։ Նա միայն ձեռքը դրեց գլխարկի ճակատնոցին ի նշան իր յարգանքի դէպի հարստութիւնը և սկսեց խեթ-խեթ նայել կալանաւորների վրայ, կարծես խոստանալով յամենայն դէպս պաշտպանել նրանցից կառքի մէջ նստածներին։ Այնպէս որ կառքը ստիպուած էր սպասել ամբողջ խմբի անցնելուն և առաջ շարժուեց միայն այն ժամանակ, երբ նրա կողքով դղըրդոցով անցաւ վերջին սայլը վրան բարձած տոպրակներով ու նստած կալանաւորուհիներով, որոնց մէջից իստերիկաւոր կինը, որ արդէն հանգստանալու վրայ էր, տեսնելով հարուստ կառքը, սկսեց նորից հեկեկալ ու հեծկլտալ։ Միայն այդ ժամանակ կառապանը թեթեակի իրար տուեց սանձափոկերը, և սևաթոյր ու սրբնթաց նժոյգները, պայտերով զրնգացնելով փողոցի խճայատակը, տարան բէզինէ գողերի վրայ փափուկ երերուող կառքը դէպի ամարանոց, ուր գնում էին զուարճանա-

լու հարուստ պարոնը, իր կինը, աղջիկը ու բարակ վզով և ցցուած անրակներով տղան:

Ոչ հայրը, ոչ մայրը չը բացատրեցին ոչ աղջկան, ոչ տը-դային նրանց տեսածք Այնպէս որ երեխաները իրանք պէտք է լուծէին այն հարցը, թէ ինչ նշանակութիւն ունէր այդ տեսա-րանը:

Աղջիկը, նկատի առնելով մօր գէմքի արտայայտութիւնը, հարցը այնպէս լուծեց, թէ դրանք ամենեին այնպիսի մարդիկ չէին, ինչպէս իր ծնողներն ու նրանց ծանօթները, թէ դրանք վատ մարդիկ էին, և թէ այդ պատճառով պէտք էր հէնց այն-պէս վարուել նրանց հետ, ինչպէս որ վարուել էին. Ուստի և նա միայն սարսափ էր զգում և ուրախացաւ, երբ այլ ես չէր տեսնում այդ մարդկանց:

Բայց երկար ու նիհար վզով տղան, որ, առանց աչքերը թարթելու ու հեռացնելու, նայում էր կալանաւորների գնաց-քին, հարցը ուրիշ կերպ լուծեց: Նա հաստատ ու անկասկած գիտէր, իմացած լինելով այդ բանը ուղղակի Աստուծուց, որ այդ մարդիկը բոլորովին նոյնպիսի էակներ էին, ինչպէս ինքը և առնասարակ բոլոր մարդիկ, և որ այդ պատճառով կը նշանակի ով որ վատ բան էր արել դրանց, այնպիսի բան, որ չը պէտք է անել, և նա խղճում էր նրանց և սարսափ էր զգում այն մարդկանցից, որոնք շղթայուած էին ու ածիլուած կամ նրանցից, որոնք շղթայել էին նրանց ու ածիլել նը-րանց գլուխը: Եւ այդ պատճառով տղայի շրթունքները քանի գնում, ուռչում էին, և նա ահազին ճիգ էր թափում, որ լաց չը լինի, կարծելով, թէ ամօթ է լալ այդպիսի գէպքերում:

XXXIV

Նեխլիւդովը նոյնքան արագ քայլերով էր գնում, որքան և կալանաւորները, և նոյն իսկ թեթև հագնուած լինելով, թեթև վերարկու ունենալով, նա սարսափելի շոք էր զգում և, որ գիխաւորն է, խեղդւում էր փոշուց ու փողցներում կանգնած անշարժ տափ օդից: Մօտ քառորդ վերստ անցնելուց յետոյ՝ նա նստեց կառքը ու այդպէս շարունակեց ճանապարհը, բայց կառքի մէջ, փողոցի մէջտեղում, նրան աւելի ևս շոք էր թը-ւում: Նա փորձեց զբաղեցնել իր միտքը իր ու փեսայի երէկուայ խօսակցութեամբ, բայց այժմ այդ հարցը այլ ես նրան այնպէս չէր յուզում, ինչպէս առաւօտեան: Այդ մտահոգութիւ-նը այժմ պօղւում էր կալանաւորների խմբի բանափց գուրս գալու և ոսով կայարան գնալու ազդած տպաւորութիւններով:

իսկ որ գլխաւորն էր, շոքը մարդու հոգի էր հանում: Ցանկապահի մօտ, ծառերի ստուերում, երկու բէալիստ տղաներ, զիլսարկները հանած, կանգնել էին իրանց առջևը չփած պաղպաղակ ծախողի գլխին: Տղաներից մէկը արդէն մեծ ախորժանքով ծծում էր պաղպաղակը եղիքից գդալից, իսկ միւսը սպասում էր հերթին, մինչդեռ պաղպաղակը ծախողը ինչ որ մի դեղնագոյն բանով գլխանց լցնում էր փաքրիկ բաժակը:

— Ո՞րտեղ կարելի է խմելու բան գտնել, — հարցրեց Նեխմիւտօվը իր կառապանից, զովանալու անդիմադրելի պահանջ զգալով:

— Հէնց այստեղ մի լաւ պանդոկ կայ, — ասաց կառապանը, ծոելով անկիւնի միւս կողմը, կանգնեցրեց կառքը մի փողոցադրան մօտ, որի վրայ կախուած էր մի մեծ ցուցանակ:

Հաշուեսեղանի յետնում կանգնած թխլիկ գործակատարը, որ վերնաշապիկ ունէր հագին, և սպասաւորները, որոնց հագուստները մի ժամանակ սպիտակ գոյն էին ունեցել և որոնք այցելուների բացակայութեան պատճառով նստած էին սեղանների շուրջը, հետաքրքրութեամբ նայեցին արտասովոր հիւրի վրայ ու առաջարկեցին իրանց ծառայութիւնը. Նեխմիւտօվը սէլտէրեան ջուր պահանջեց ու նստեց պատուհանից հեռու մի կեղտոտ սիռոցով ծածկուած փոքրիկ սեղանի մօտ:

Երկու հոգի սեղաններից մէկի մօտ նստած, թէյի սարքն ու սպիտակ ապակիի շիշն առաջներին, սրբում էին ճակատների քրտինքը ու հանդիսատ կերպով ինչ որ հաշիւ տեսնում: Նրանցից մէկը սև էր ու ճաղատ զիլսով և ծործորակին ունէր սև մազերի նոյնպիսի եղերագիծ, ինչպէս և իգնատիյ Նիկիֆորօվիչը: Այդ տարաւորութիւնը նորից լիշեցրեց Նեխմիւտօվին իր ու փեսայի երէկուայ խօսակցութիւնը և իր ցանկութիւնը՝ գնալուց առաջ տեսնուել նրա ու քրոջ հետ: «Հազիւ թէ յետոյ կարողանամ համնել գնացքին, — մտածեց նա, — Սւելի լաւ է նամակ գրեմ: Եւ, թուղթ, ծրար ու նամականիշ պահանջելով, նա սկսեց, զով ու պճպճան ջուրը կում-կում խմելով, մտածել, թէ ինչ գրի: Բայց մտքերը ցրիւ էին գալիս և նա ոչ մի կերպ չէր կարողանում կաղմել նամակը:

«Սիրելի նատաշա, չեմ կարող գնալ այստեղից իգնատիյ Նիկիֆորօվիչի հետ ունեցած խօսակցութեանս ծանր տպաւորութեան տակ... — սկսեց նա: «Իսկ յետոյ, Նեխմիւտին իշնդրել երէկուայ ասածներիս համար: Բայց չէ որ ես ասացի այն, ինչ որ մտածում էի: Եւ նա կը կարծի, թէ ես հրաժարում եմ իմ ասածից: Բացի այդ, նրա միջամտութիւնը իմ գործերի մէջ... Զէ, չեմ կարող», — մտածեց նա ու զգալով, որ նորից ա-

տելութիւն է զարթնում սրտումը դէպի այդ օտար, ինքնապաստան և իրան չը հասկացող մարդը, նամակը, առանց վերջացնելու, դրեց գրպանը ու պահանջածի փողը վճարելով՝ դուրս եկաւ փողոցը և կառք նստելով պատուիրեց կառապանին հասնել կալանաւորների յետերից:

Շոքը աւելի սաստկացել էր: Պատերն ու քարերը կարծես ջերմ ող էին արտաշնչում: Մարդուս ոսները կարծես խաշւում էին փողոցի տաքացած քարերի վրայ, և Նեխլիւդովը այրուածքի տպաւորութիւն զգաց, երբ մերկ ձեռքը դիպցրեց կառքի փայլուկած թերին:

Զի՞ն թմրած քայլերով քաշ էր տալիս կառքը փողոցի միջով, համաշափ բաղսումով զարկելով պայտերը փոշոտ ու անհարթ խճայատակին: կառապանը անդադար ննջում էր, իսկ Նեխլիւդովը ովհնչի մասին չէր մտածում ու անտարբեր կերպով նայում էր դէպի առաջ: Փողոցի էջքում մի մեծ տան զարպասի դիմաց կանգնած էր մարդկանց մի խումբ ու մի զինուոր հրացանը ձեռքին: Նեխլիւդովը կանգնեցնել տուեց կառքը:

— Ի՞նչ է այդ, — հարցրեց նա մօտակայ տան բակապանից:

— Ի՞նչ որ բան է պատահել կալանաւորին:

Նեխլիւդովը իջաւ կառքից ու մօտեցաւ մարդկանց խմբին: Մայթի մօտ զառիվայր խճայատակի խորդ ու բորդ քարերի վրայ՝ գլուխը ոտներից յած պառկած էր մի մոխրագոյն խալաթ ու նոյնպիսի անդրավարտիք հաղած հասակաւոր լայնամարմին կալանաւոր՝ կարմրաշէկ միրուաքով, կարմրած երեսով ու ճապալ քթով: Նա փոկուել էր երեսնիվեր, պէտէնսու ձեռները ափնիվայր չուած, և երկար ընդմիջումներից յետոյ, համաշափ կերպով ցնցելով բաձր ու հուժկու կուրծքը, հեծկլառում էր, նայելով երկնքին արիւնակալած սեեռուն աչքերով: Նրա գլխին կանգնած էին մի մոռայլ փողոցային ոստիկան, մի լրագրավաճառ, մի նամակատար, մի գործակատար, մի պառակ կին հովանոցը ձեռքին և մի խուզուած տղայ դատարկ զամբիւլը կռնից կախ արած:

— Բանսումը թուլացել ոյժից ընկել են, ինչպէս կարելի է կայարան տանել այսպիսի ժամանակ, երբ կրակ է թափւում երկնքից, — ում որ մեղաղրում էր գործակատարը, դիմելով Նեխլիւդովին, երբ նա մօտեցաւ խմբին:

— Երեխ կը մեռնի, — լալագին ձայնով ասում էր հովանոցաւոր կինը:

— Շապկի օձիքը պէտք է բանալ, — ասաց նամակատարը:

Փողոցային ոստիկանը սկսեց հաստ ու դողդոջուն մատներով անշնորհք կերպով բանալ օձիքի կապերը կալանաւորի

Ջուտ ու կարմրած վզի վրայ նա, ըստ երևոյթին, յուզուած ու շփոթուած էր, բայց և այնպէս հարկաւոր համարեց դիմել ամբոխին.

—Ի՞նչ էք կիտուել, Առանց այն էլ շոք է, Քամու առաջը բռնում էք:

—Բժիշկը պէտք է քննէր, Թոյլերին պէտք է թողնել տար բանտումը, Գիթը որ բռնես հոգին կը տայ. Կարելի է միթէ այսպիսիներին տանել, —ասում էր գործակատարը, ակներևաբար աշխատելով ցոյց տալ, որ ինքը գիտի թէ կարգը ինչպէս է:

Ոստիկանը, արձակելով օձիքի կապերը, ուղղուեց ու նայեց շուրջը:

—Ասում եմ, ցրուեցէք, ինչ գործ ունէք այստեղ, չըք տեսել ինչ է, —ասաց նա հաւաքուած մարդկանց, նայելով նեխսլիւդովին ու համակրութիւն սպասելով նրանից, բայց, համակրութիւն չը տեսնելով նրա հայեացքում, նայեց ուղեկցող զինուորին:

Բայց զինուորը կանգնած էր մի կողմէն, նայելով իր ծըռուած կրունկին, բոլորովին անտարբեր կերպով էր վերաբերուում ոստիկանի դժուար դրութեանը:

—Ում գործը որ է՝ նրանք հոգս չեն տանում, Միթէ օրբէնք է մարդկանց մահուան դուռը հասցնել:

—Շատ էլ կալանաւոր է, բայց չը որ մարդ է, Աստուծուսեեն ամբոխուած է, —ասում էին ամբոխում:

—Գլուխը բարձր տեղ դրէք ու ջուր տուէք խմի, —ասաց նեխսլիւդովը:

—Գնացել են ջուր բերելու, —պատասխանեց ոստիկանը ու կալանաւորի կռնատակերից բռնելով՝ դժուարութեամբ քաշ տուեց իրանը աւելի բարձր տեղ:

—Ի՞նչ էք կիտուել այստեղ, —յանկարծ լսուեց մի վճռական ու իշխանական ձայն, և կալանաւորի շուրջը համախըմբուած մարդկանց արագ բայլերով մօտեցաւ թաղական ոստիկանը, չափից վեր մաքուր ու փայլուն կիտէլով և աւելի ևս փայլուն բարձրաճիտք կօշիկներով, —ծրուեցէք: Նայելու բան չը կայ այստեղ, —գոռաց նա ամբոխի վրայ, գեռ չը տեսած, թէ ինչու են մարդիկ հաւաքուել այնտեղ:

Խսկ երբ հասաւ եղելութեան տեղը ու տեսաւ մերձիմահ կալանաւորին, նա հաւանութեան նշան արեց զիխով, կարծես թէ հէնց այդ բանին էր սպասում, ու դիմեց փողոցային ոստիկանին.

—Ի՞նչպէս է պատահել:

Փողոցային ոստիկանը զեկուցեց, որ կալանաւորների խումբը տանելիս մէջներից այս մէկը վայր էր ընկել և ուղեկցող պահակախմբի օֆիցիուսը հրամայել էր նրան թողնել այստեղ:

—Ել ի՞նչ էք սպասում: Պէտք է տանել ոստիկանատուն: Կառապան կանչիր:

—Բակապանը գնաց կանչելու, —ասաց փողոցային ոստիկանը, ձեռքը դնելով գլխարկի ճակատնոցին:

Գործակատարը սկսեց ինչ որ ասել շոքի մասին:

—Քո ի՞նչ գործն է այդ: Գնա՞ ուր որ գնալու ես, —ասաց թաղականը ու այնպէս խիստ կերպով նայեց գործակատարի վրայ, որ նա ձայնը կտրեց:

—Պէտք է ջուր տալ խմելու, —ասաց Նեխլիւդօվը:

Թաղականը խեթ-խեթ նայեց նաև Նեխլիւդօվի վրայ, բայց ոչինչ չասաց: Խսկ երբ բակապանը մի թասով ջուր բերեց, նա պատուիրեց փողոցային ոստիկանին՝ առաջարկել կալանաւորին: Փողոցային ոստիկանը բարձրացրեց կալանաւորի քաշ ընկած գլուխը ու փորձեց ջուրը ածել բերանը, բայց կալանաւորը չէր խմում: Ջուրը թափում էր միրուքի վրայով ու թրջում բաճկոնի կուրծքը և քաթանէ փաշոտ վերնաշապիկը:

—Ածա զլիին, —հրամայեց թաղականը, և փողոցային ոստիկանը հանեց կալանաւորի գլխից տափակ թասակը ու ջուրը շուռ տուեց նրա կարմրաշէկ խուճում մազերի ու լիրկ գանգի վրայ:

Կալանաւորի աշքերը աւելի ևս լայն բացուեցին, կարծես վախուորած, բայց նրա գրութիւնը չը փսխուեց: Փոշիախանն ջուրը կեղտոտ հոսանքներով թափում էր նրա երեսի վրայով, բայց բերանը էլի համաշափ հեծկլտում էր և ամբողջ մարմինը ցնցւում զղածքաբար:

—Հապա սա ի՞նչ է: Այս կառքով տարէք, —զիմեց թաղականը փողոցային ոստիկանին, ցոյց տալով Նեխլիւդօվի վարձած կառքը: —Ե՞ն, դու, մօտեցիր այստեղ:

—Բոնուած եմ, —մոայլ կերպով ասաց կառապանը, առանց աշքերը բարձրացնելու:

—Այդ իմ կառքն է, —ասաց Նեխլիւդօվը, —բայց ոչինչ, վերցրէք: Ես կը տամ վարձը, —աւելացրեց նա, դիմելով կառապանին:

—Ել ի՞նչ էք կանգնել, —գոռաց թաղական ոստիկանը: —Բարձրացրէք:

Փողոցային ոստիկանը, բակապանը և զիմուորը բարձրացրին մեմնող կալանաւորին ու տարան դրեցին կառքի մէջ:

Բայց կալանաւորը չէր կարողանաւմ նստած մնալ, — գլուխը կախ էր ընկնում դէպի յետ և ամբողջ մարմինը նստելու տեղ վից սլում էր ներքեւ:

—Պառկացրէք, —հրամայեց թաղականը:

—Ոչինչ, ձերդ բարեծննդութիւն, այսպէս էլ կը տանեմ. — ասաց փողոցային սատիկանը, պինդ նստելով մեռնող կալանաւորի կողքին ու զօրեղ աջ ձեռքով գրկելով նրան կռնաւակից:

Զինուորը բարձրացրեց կալանաւորի ոտները, որոնց բանավին ստնամաններ էին հադրած առանց փաթաթանների, և դրեց կառքի մէջ ու ձգեց դէպի կառապանի նստելու տեղը:

Թաղական սատիկանը նայեց շուրջը և խճայատակի վրայ տեսնելով կալանաւորի տափակ թասակը՝ վերցրեց ու դրեց նրա յետ ընկած թաց գլխին:

—Մարշ, —հրամայեց նա:

Կառապանը բարկացած յետ նայեց, թափ տուեց գլուխը, և զինուորի ուղեկցութեամբ կամաց-կամաց յետ քշեց կառքը դէպի թաղական սատիկանատունը, կալանաւորի կողքին նըստած սատիկանը անդադար գրկում էր կալանաւորի ներքեւ իջնող մարմինը, որի գլուխը ճօճուռմ էր ամեն կողմէ: Ուղեկցող զինուորը, որ գնում էր կողքիցը, ուղղում էր կալանաւորի ոտները: Նեխլիւդօվը գնաց նրանց յետեից:

XXXV

Մօտենալով թաղական սատիկանատանը ու անցնելով հըրդեհաշէջ պահապանի մօտպվ, կալանաւորին տանող կառքը մըստաւ սատիկանատան բակը ու կանգ առաւ գոներից մէկի տապաջ:

Բակում հրդեհաշէջները, թեները քշտած, բարձրածայն խօսելով ու ծիծաղելով լուանում էին իրանց կառքերից մէկը:

Հէնց որ կալանաւորին բերող կառքը կանգ առաւ, մի քանի հասարակ սատիկաններ շրջապատեցին նրան, գրկեցին կալանաւորի անշունչ մարմինը կռնատակերից ու ոտներից և վեր առան տակներին ճռռացող կառքի վրայից:

Կալանաւորին բերող սատիկանը, կառքից իջնելով, թափ տուեց թմրած ձեռքը, հանեց գլխարկը ու խաչակնքեց երեսը: Մեռելին դռնով ներս մտցրին ու սանդուխով տարան վերև: Նեխլիւդօվը գնաց նրա յետեից: Մեռելին ներս տարան մի փոքրիկ ու կեղտոտ սենեակ, ուր կային 4 մահճականներ: Երկուսի վրայ՝ խալաթներ հագած նստած էին երկու հիւանդներ՝

մէկը մի ծուռքերան մարդ կապած վզով, միւսը՝ մի թռքախտաւոր երկու մահճակալ ազատ էին, կալանաւորին դրեցին նըրանցից մէկի վրայ, Փայլուն աչքերով ու անդադար շարժուող յօնքերով մի փոքրիկ մարդուկ, որ միմիայն փոխնորդ ունէր հագին ու գուղպաներ, արադ ու մանր քայլերով մօտեցաւ, կալանաւորին, նայեց նրան, յետոյ Նեխիլիւզին ու սկսեց բարձրածայն ծիծաղել, Այդ մի խելագար էր, որ պահւում էր ոսմիկանատան կից հիւանդանոցում:

— Ուզում են ինձ վախացնել,—ասաց նաւ—Բայց չէ, չեն կարող:

Մեռելին ներս բերող ոսմիկանների յետնից ներս մտան թաղական ոսմիկանը և ֆէլդչէրը:

Ֆէլդչէրը, մօտենալով մեռելին, բռնեց կալանաւորի գեղնաւուն, պէտէնոտ, դեռ փափուկ, բայց արդէն մեռելատիպ գունատ ձեռքը, պահեց մի քիչ այդպէս ու յետոյ բաց թողեց, կալանաւորի ձեռքը անկենդան կերպով վայր ընկաւ փորի վրայ:

— Պապոնց մօտ է գնացել,—ասաց ֆէլդչէրը, թափ տալով գլուխը, բայց անշուշտ պահանջած կարգը կատարելու համար բաց արեց մեռելի անթափ թաց շապիկը և, յետ գցելով իր խուճուճ մազերը ականջի վրայից, երեսը դրեց կալանաւորի գեղնաւուն անշարժ բարձր կրծքին, Ամենքը լուռ էին, Ֆէլդչէրը բարձրացրեց գլուխը, նորից թափ տուեց և մատով շօշափեց մեռելի կապտագոյն, սեեռուած ու բաց աչքերի վերին կոպերից մէկը, յետոյ միւսը:

— Զէք կարող վախացնել, չէք կարող,—ասում էր խելագարը, ամբողջ ժամանակը թքելով դէպի ֆէլդչէրի կողմը:

— Հը, ինչպէս է, — հարցրեց թաղական ոսմիկանը:

— Ի՞նչպէս է, — կրկնեց ֆէլդչէրը: — Պէտք է տանել մեռելատունը:

— Լաւ նայեցէք, հօ չէք սխալւում, — հարցրեց թաղականը:

— Ես պէտք է սովորեմ, ինչ է, — ասաց ֆէլդչէրը, ըլ զիւտեմ ինչու ծածկելով մեռելի բաց կուրծքը. — Կ'ուղարկեմ Սատֆէյ իվանովիչի յետնից, թող նա էլ նայի, Պետրօվ, գնականչի, — ասաց ֆէլդչէրը ու հեռացաւ մեռելից:

— Տարէք մեռելատունը, — ասաց թաղական ոսմիկանը: — Իսկ դու յետոյ արի զիւնատունը, որ ստորագրես, — աւելացրեց նա, զիմելով ուղեկցող զինուորին, որ ամբողջ ժամանակը չէր հեռանում կալանաւորից:

— Լսում եմ, — պատասխանեց զինուորը:

Փողոցային սատիկանները վերցրին մեռելին ու նորից ներքև տարան սանդուխով, Նեխիւդօվը ուզում էր գնալ նըրանց յետից, բայց խելագարը կանգնեցրեց նրան:

—Դուք Էլ հօ նրանց հետ դաւ չէք կազմել ինձ դէմ: Մի պապիրօս տուշք ուրեմն,—ասաց նա:

Նեխիւդօվը հանեց պապիրօսները ու մի հատ տուեց նրան: Խելագարը, յօնքերը շարժելով ու սաստիկ արագ խօսելով, սկսեց պատմել, թէ ինչպէս են իրան տանջում հիպնոզացնելով, Բոլորն էլ ինձ դէմ են և իրանց մէդիումների միշոցով տանջում, չարչարում են ինձ...

—Ներողութիւն,—ասաց Նեխիւդօվը և կիսատ թողնելով նրա ասած՝ դուրս եկաւ բակը, որպէս զի իմանայ, թէ ուր են տանում մեռելին:

Սատիկանները իրանց բեռով արգէն անցել էին ամբողջ բակը և մտնում էին ներքնատան դնով: Նեխիւդօվը ուզեց մօտենալ նրանց, բայց թաղականը կանգնեցրեց նրան.

—Ի՞նչ էք ուզում:

—Ոչինչ,—պատասխանեց Նեխիւդօվը:

—Որ ոչինչ, ուրեմն գնացէք ձեր բանին:

Նեխիւդօվը հնազանդուեց ու գնաց դէպի իր կառքը: Կառապանը ննջում էր: Նեխիւդօվը զարդեցրեց նրան ու պատուիրեց նորից քշել դէպի կայարան:

Դեռ 100 քայլ անցած չէր լինի, որ հանդիպեց դարձեալ մի սայլի, որին նոյնպէս ուղեկցում էր մի զինուոր հրացանը ձեռքին և որի վրայ պառկած էր մի ուրիշ, ակներեաբար արդէն մնուած կալանաւոր: Կալանաւորը պառկած էր մէջքի վրայ, և սև միրուբաւոր ածիլած գլուխը, որի վրայի տափակ թսասակը իցել էր մինչև քիթը, անդադար ճօճում էր ու զիալջում սայլին: Հաստ կօշիկներ հագած սայլապանը քշում էր ձին, քայլելով սայլի կողքից: Յետեից գալիս էր մի փողոցապահ սատիկան: Նեխիւդօվը ձեռքը դիպցրեց կառապանի ուսին:

—Ինչեր են անում,—ասաց կառապանը, կանգնեցնելով ձին:

Նեխիւդօվը իջաւ կառքից ու հետեւելով սայլին՝ դարձեալ հրդեհաշէջ պահապանի մօտով մտաւ սատիկանատան բակը: Բառ կում այժմ հրդեհաշէջները արդէն լուացել վերջացրել էին իրանց կառքը, և նրանց տեղում կանգնած էր կապտերիդ գըլխարկ դրած բարձրահասակ ու ոսկրոտ բրանդմայօրը, որ ձեռները գրպանները խրած խստօրէն նայում էր կծոտած զգով բաց գեղնագոյն մի նժոյգի, որին հրդեհաշէջ զինուորը ման էր ածում նրա առաջին: Նեյզը մի քիչ կազում էր առաջի ոտի

վրայ, և բրանդմայօրը բարկացած ինչ որ մի բան էր ասում այնտեղ կանգնած անասնաբոյժին:

Թաղական ոստիկանն էլ այնտեղ էր: Տեսնելով երկրորդ մեռելին, նա մօտեցաւ սայլին:

—Ո՞րտեղ վերցրեցիք, —հարցրեց նա, չմահաւանօրէն թափ տալով գլուխը:

—Ստարայա Գօրբատօվսկայա փողոցում, —պատասխանեց փողոցային ոստիկանը:

—Կարանաւոր է, —հարցրեց բրանդմայօրը:

—Հրամել էք:

—Այս երկրորդն է այսօր, —ասաց թաղականը:

—Լաւ կարգեր են: Ասենք իրանք էլ մի բան չեն, —ասաց բրանդմայօրը և դիմելով կազ ձիուն տանող հրդեհաշէջին՝ գոռաց. —անկիւնի մսութքի մօտ կանգնեցրու: Իսկ քեզ, շուն շանորդի, ցոյց կը կամ, թէ ինչ կը նշանակի փշացնել այնպիսի մի ձի, որ քեզնից թանգ արժի:

Այդ մեռելին էլ փողոցային ոստիկանները վերցրին այնպէս, ինչպէս վերցրել էին առաջինին, ու տարան հիւանդանոցը: Նեխլիւդօվլ հիանօցացածի նման գնաց նրանց յետելից:

—Ի՞նչ էք ուզում, —հարցրեց ոստիկաններից մէկը:

Նեխլիւդօվլ առանց պատասխանելու շարունակեց զնալ նրանց յետելից:

Խելագարը, մահճակալի վրայ նստած, ազահաբար ծխում էր Նեխլիւդօվլի տուած պապիրօսը:

—Հը՛, վերադարձաք, —ասաց նա ու սկսեց քրքջալ: Մեռելին տեսնելով, նա կնճռեց դէմքը: —Դարձեալ, —ասաց նա: —Զանձրացրին բոլորովին երեխայ հօ չեմ: Ճիշտ եմ ասում, չէ, —դիմեց նա Նեխլիւդօվլին հարցական կերպով ժամանակով:

Իսկ Նեխլիւդօվլ այդ միջոցին նայում էր մեռելին, որին այժմ այլ ևս ոչ չէր սփողում նրանից և որի դէմքը, որ առաջ ծածկուած էր գլխարկի տակ, այժմ բոլորովին բաց էր: Որքան այն առաջին կարանաւորը այլանդակ էր, այնքան սա չափից վեր գեղեցիկ էր թէ դէմքով, թէ ամբողջ մարմնով: Ոյժերի ամենածաղկած միճակում գտնուող մի տղամարդ էր այդ: Չը նայելով գլխի մի կէսին, որ այլանդակուած էր ածիկու չնորհիւ, ցածիկ և ուղղաձիգ ճակատը, որ բարձրութիւններ էր կազմում նրա սեռակ, այժմ անկենդան, աչքերի վերսում, շատ գեղեցիկ էր, ինչպէս նաև փոքրիկ ու մի քեզ կեռ քիթը և բարակ ու սև բիսերը: Արդէն կապտած շրթունքները ժպիտ էր դէմքի ներբեկ մասը, իսկ գանդի ածիկած կողմից երեսում էր

գեղեցիկ ականջը: Դէմքի արտայայտութիւնը և անդորր էր, և խիստ, և բարի, Մի կողմ թողած այն, որ այդ գէմքից երեւում էր, թէ հոգեկան կեանքի ինչ հնարաւորութիւններ էին ոչնչացրած այդ մարդու մէջ, — ձեռքերի ու շղթայակապ ուների նուրբ ուկորներից ու բոլոր համաշափ անդամների զօրեղ մը կաններից երեսում էր, թէ նոյն իսկ լոկ իբրև մարդկային ցեղին պատկանող մի կենդանի՝ որքան պանչելի, հուժկու ու ճարպիկ արարած էր այդ, մի արարած, որ իր տեսակում աւելի կատարեալ կենդանի էր, քան այն բաց գեղնագոյն նժոյգը, որը փշացնելու համար այնքան բարկանում էր բրանդմայօրը: Եւ սակայն նրան մահացրել էին, և ոչ միայն ոչ ոք չէր խղճում նրան, իբրև մարդու, այլ և ոչ ոք չէր խղճում նրան, իբրև զուր փշացած աշխատաւոր կենդանու: Միակ զգացմունքը, որ բոլոր շրջապատողների մէջ զարթեցնում էր այդ մարդու մահը, այն էր, որ գիշամակութեամբ մտածում էին այն զլիսացաւանքի մասին, որ պատճառում էր նրանց այդ՝ քաքայուել սպառնացող մարմինը մի կերպ հեռացնելու անհրաժեշտութիւնը:

Հիւանդանոյը մտան բժիշկը, Փէլգչէրը ու քաղաքամասի սստիկանը: Բժիշկը մի հուժկու և կարծ ու թիկնաւէտ մարդ էր չէսունչէ պիշակով ու նոյն կտորից նեղ անդրավարտիքով, որ քիֆ շրջապատում էր նրա մկանուտ ազգրերը: Քաղաքամասի սստիկանը մի փոքրիկ ու հաստիկ մարդ էր գնդան: և կարմիր երեսով, որ աւելի և կլոր ձեւ էր ստանում, որովհետեւ նա սովորութիւն ունէր թշերի մէջ հաւաքել օդը ու յետոյ կամաց-կամաց դուրս թողնել բերնից: Բժիշկը նստեց մահակալի վրայ մեռելի կողքին և նոյնպէս, ինչպէս Փէլգչէրը, բըռնեց ձեռքերը, ականջը դրեց սրտին ու վեր կացաւ ներքի ձգելով անդրավարտիքը:

— Սրանից էլ կարգին մեռնել չի լինի, — ասաց նա:

Քաղաքամասի սստիկանը բերանը լցրեց օդով ու կամաց-կամաց բաց թողեց դուրս:

— Ո՞ր բանտիցն է, — դիմեց նա ուղեկցող զինուորին:

Զինուորը պատասխանեց ու յիշեցրեց մեռելի ուներին կապած շղթայի մասին:

— Կը հրամայեմ հանեն, փառը Աստուծու դարբիններ կան, — ասաց քաղաքամասի սստիկանը ու նորից ոււացնելով թշերը, գնաց դէպի դուռը, կամաց-կամաց դուրս թողնելով բերնից օդը:

— Ի՞նչո՞ւ է այդ պէս լինում, — զիմեց նեխլիւդօվը բժիշկին:

Բժիշկը նայեց նրան ակնոցի վրայով:

— Ի՞նչն է ինչից լինում: Որ արևահարութիւնից մեռ-

նում են. նրանից, որ ամբողջ ձմեռը առանց շարժուելու ու առանց լոյս տեսնելու նստած են լինում բանտում, և յանկարծ դուրս են թողնում արևի մէջ, այն էլ այսօրուայ նման մի օր, ու ահազին խմբով գնում են իրար յետեից. ի հարկէ, արևը կը տայ գլխներին:

—Որ այդպէս է, ինչու են նրանց ուղարկում այսպիսի ժամանակ:

—Ուղարկողներից հարցրէք այդ: Բայց դուք մեռելի ինչն էք:

—Ոչինչ:

—Որ այդպէս է... ներողութիւն, ես ժամանակ չունեմ, —ասաց բժիշկը ու բարկացած՝ ներքն ձգելով անդրավարտիքը, գնաց գէպի հիւանդների մահիճները:

—Հը՞ Շնչպէս են գործերդ, —դիմեց նա վիզը կապած ու ծուռբերան գունատ հիւանդին:

Իսկ խելագարը այդ միջոցին նստած էր իր մահճակալի վրայ ու, դադարելով ծխելուց, թքում էր բժշկի ուղղութեամբ:

Նեխլիւդօվը իջաւ բակը և, անցնելով հրդեհաշէջների ձիերի, հաւերի ու պղնձէ սաղաւարտով հրդեհաշէջ պահապանի մօտով՝ դուրս եկաւ դարպասովը և նստելով կառը ու դարթեցնելով կառապանին, որ դարձեալ ննջում էր, գնաց երկաթուղու կայարանը:

XXXVI

Երբ Նեխլիւդօվը հասաւ կայարան, կալանաւորները բոլորն էլ արդէն նստել էին վանդակածածկ պատուհաններով վագոնները, Պլատֆորմում կանգնած էին մի քանի ճանապարհ գնողներ. նրանց՝ մօտ չէին թողնում վագոններին: Ուղեկցող զինուորները այսօր առանձնապէս մտահոգ էին: Բանտից մինչեւ կայարանը ճանապարհին արևահարութիւնից վայր էին ընկել ու մեռել, բացի Նեխլիւդօվի տեսած երկու հոգուց, էլի երեք հոգի. մէկին, առաջին երկուսի նման, տարել էին մօտակայ ոստիկանատունը, իսկ երկուսը վայր էին ընկել կայարան հասնելուց յետոյ *): Զինուորները մտահոգ էին ոչ այն պատճա-

*) 80-ական թուականների սկզբում հինգ կալանաւոր մի օրում մեռան այն միջոցին, երբ նրանց տանում էին Մոսկուայի Յուտիրկա բանտից սիմիլ-նօվգորօդի երկաթուղու կայարանը: Տան, հեղ.

ռով, որ իրանց ուղեկցած կալանաւորների մէջից մեռել էին հինգ հոգի, որոնք կարող էին կենդամնի մնալ Այդ նրանց շատ փոյթը չէր նրանց հոգս էր պատճառում այն, թէ ինչպէս կատարեն այն բոլորը, որ օքնափով պահանջւում է այդպիսի դէպ-քերում: Պէտք էր մեռելներին և նրանց թղթերն ու բաները յանձնել ուր հարկն է և հանել նրանց անունները այն կալանաւորների ցանկից, որոնց պէտք էր տանել Նիժնի, իսկ այդ շատ զիմացաւանք բան էր, մանաւանդ այդպիսի շոր ժամանակ:

Դրանով էին զբաղուած զինուորները, ուստի և, մինչև այդ բոլոր կարգադրութիւնները վերջացնելը, չէին թողնում Նեխիլւովին և ուրիշ խնդրողներին՝ մօտենալ վագօններին: Նեխիլւովին այնու ամենայնի թոյլ տուեցին, որովհետև նա փող տուեց ունտէր-օֆիցէրներից մէկին: Այդ ունտէր-օֆիցէրը ճանապարհ տուեց Նեխիլւովին, միայն թէ ինդրեց, որ շուտով վերջացնի խօսելիքը ու հեռանայ վագօնից, որպէս զի օ-ֆիցէրը չը տեսնի: Գնացքում 18 վագօն կար և բոլորն էլ, բայց իր իշխանաւորների վագօնից, լիք-լեցուն էին կալանաւորներով: Վագօնների պատուհանների մօտով անցնելիս Նեխիլւովը ականջ էր դնում, թէ ինչ է կատարեւում ներսը: Բոլորումն էլ լսում էր զղթաների շաշիւն, իրարանցում, խօսակցութեան աղմուկ, լի անմիտ պղծախօսութեամբ, բայց Նեխիլւովի սպասածի հակառակ՝ ոչ մի տեղ չէին խօսում ճանապարհին ընկած ընկերների մասին: Խօսակցութիւնները աւելի վերաբերում էին տոպրակներին, խմելու ջրին ու տեղի ընտրութեանը: Վագօններից մէկի պատուհանով ներս նայելով, Նեխիլւովը տեսաւ վագօնի մէջտեղում, անցքում երկու ուղեկցող զինուորների, որոնք հանում էին կալանաւորների ձեռնակապերը: Կալանաւորները մենանում էին կռները և զինուորներից մէկը բաշխակերպ բանում էր ձեռնակապերի կողպէքը ու հանում ըլդ-թաները նրանց ձեռներից, իսկ միւսը հաւաքում էր զղթաները: Տղամարդկանց բոլոր վագօնների մօտով անցնելուց յետոյ Նեխիլւովը մօտեցաւ կանանց վագօններին: Այդ վագօններից երկրորդի մէջ լսում էր համաշափ կանացի հեծեծանք և վայ-նասուն՝ օ՛ֆ, Տէր Աստուած: Օ՛ֆ, Տէր Աստուած»:

Նեխիլւովը այդ վագօնն էլ անցաւ և այնտեղ կանգնած ուղեկցող զինուորի ցուցմունքով մօտեցաւ երրորդ վագօնի պատուհանին: Հէնց որ Նեխիլւովը գլուխը մօտեցրեց այդ վագօնի պատուհանին, ներսից վրան փչեց տաք օդ, լի մարդկային քրտինքի թանձր հոտով, և պարզ կերպով լսուեցին կանացի ճղլզան ձայներ: Բոլոր նստարանների վրայ նստուած էին ու

զիլ ձայնով խօսում էին կարմրատակած ու քրտնաթոր կա-
նաք խալաթներով ու բաճկոններով երբ Նեխլիւդովը երեսը
մօտեցրեց պատուհանի գանդակին, այդ գրաւեց նրանց ուշա-
դրութիւնը: Մօտիկ նստածները լոեցին ու մօտեցան նրան:
Մասլօվան՝ միայն բաճկոնով և գլուխը բաց նստած էր զիմացի
պատուհանի մօտ: Աւելի դէսը նստած էր սպիտակ ու ժպտուն
ֆեղոսեան: Նեխլիւդովին ճանաչելով, նա հրեց Մասլօվային ու
ձեռքով ցոյց տուեց պատուհանի կողմբ: Մասլօվան, որի կար-
մրած ու քրտնաթոր դէմքը իսկոյն աշխուժացաւ ու սկսեց
ժպտալ, շտապով վեր կացաւ, գլխաշորը գցեց սև մազերի վրայ
և մօտեցաւ պատուհանին ու բռնեց վանդակը:

— Համա շոք է հա, — ասաց նա՝ ուրախ-ուրախ ժպտալով:

— Բաները ստացաք:

— Շնորհակալ եմ, ստացայ:

— Էլ ոչինչ պէտք չի, — հարցրեց Նեխլիւդովը, զգալով թէ
ինչպէս ջեռուցած վագնից տափութիւնը փչում է երեսին,
կարծես բազնիսի մէջից:

— Շնորհակալ եմ, ոչինչ պէտք չի:

— Զուր որ լինէր խմէինք, շատ լաւ կը լինէր, — ասաց
ֆեղոսեան:

— Հա, լաւ կը լինէր, — կրկնեց Մասլօվան:

— Բայց միթէ այդտեղ ջուր չը կայ խմելու:

— Զուր դնում են, բայց բոլորը խմել պրծել ենք:

— Այս բոպէիս, — ասաց Նեխլիւդովը, — կը խնդրեմ զին-
ուսրից: Էլ այժմ մինչի նիմինից չենք տեսնուի:

— Բայց միթէ դժւք էլ էք զալիս, — իբր թէ չիմանալով
հարցրեց Մասլօվան, ուրախ-ուրախ նայելով Նեխլիւդովին:

— Հետեւեալ գնացքով ճանապարհ կ'ընկնեմ:

Մասլօվան ոչինչ չասաց եւ միայն մի քանի վայրկեան
անցած խոր հոգոց քաշեց:

— Ճիշտ է, պարոն, որ 12 կալանաւոր մահացել են ճանա-
պարհին, — կոսիտ գեղջկային ձայնով հարցրեց մի պառաւ ու
դաժման կալանաւորուհի:

Կօրաբլեօվան էր այդ:

— Լսած չը կամ, թէ տասներկու հոգի են: Ես տեսայ եր-
կուսին, — ասաց Նեխլիւդովը:

— Ասում են, տասներկու հոգի են, Միթէ գրա համար
ոչինչ չի լինի այդ օձի ծնունդներին:

— Իսկ կանանցից ոչ ոք չի հիւանդացել, — հարցրեց Նեխ-
լիւդովը:

— Կինարմատները պինդերես են, — ծիծաղելով առաջ մի փոքրիկ կալանաւորուհի, — բայց մէկի խեթքը չը զիտեմ ինչ է փշել, ուզում է երեխայ բերել, կառւմ էք, ինչպէս է ձայնը գլուխը գցել, — շարունակեց նա, շոյց տալով հարեւան վագօնը, որտեղից շարունակ լսում էին հեծեծանքներ:

— Հարցնում էիք, ոչինչ հարկաւոր չի, — առաջ Մասլօվան, աշխատելով պահել շրթունքները ուրախ ժպտալուց, — չի կարելի արդեօք թողնել այդ կնոջը, թէ չէ խեղճը սարսափելի տանջում է: Զեիք կարող ասել իշխանաւորին:

— Շատ լաւ, կ'ասեմ:

— Մէկ էլ չի կարելի արդեօք, որ սրան թողնեն տեսնուի իր մարդու, Տարասի հետ, — աւելացրեց նա, աշքերով ցոյց տառով ժպտացոյ Ֆեոդոսիայի վրայ: — Նա ձեզ հետ է զալիս, չի:

— Պարսն, չի կարելի խօսել, — լսուեց ունտէր-օֆիցէրներց մէկի ձայնը: Այդ այն ունտէր-օֆիցէրը չէր, որ թոյլ էր տուել Նեխլիւդովին մօտենալ վագօնին:

Նեխլիւդովը հեռացաւ ու գնաց գնատելու օֆիցէրին, որպէս զի խնդրէր ազատուող կնոջ ու Տարասի մասին, բայց երկար ժամանակ ոչ կարողանում էր գտնել նրան, ոչ էլ մի պատասխան ստանալ զինուորներից: Զինուորները սաստիկ իրարանցման մէջ էին. ոմանք մի կալանաւորի տանում էին ինչ-որ մի տեղ, միւսները վաղում էին մթերքներ գնելու ճանապարհի համար ու դարսում էին իրանց բաները վագօնները, ոմանք էլ կատարում էին օֆիցէրի հետ գնացող տիկնոջ պատուէրները, և առհասարակ չկամութեամբ էին պատասխանում Նեխլիւդովի հարցերին:

Նեխլիւդովը օֆիցէրին տեսաւ միայն այն ժամանակ, երբ արդէն խփել էին երկրորդ զանգը: Օֆիցէրը, ուսերը վեր քաշած ու կարծիկ ձեռքովը սրբելով բերանը ծածկող բեխերը, ինչ որ մի բանի համար յանդիմանում էր Փէլդֆէրէլին:

— Ի՞նչ էք ուզում, — հարցրեց նա Նեխլիւդովից:

— Այսուեղ մի կին պատում է վագօնում, կարծում եմ...

— Ազատում է թող ազատուի, այն ժամանակ կը տեսնեմ, թէ ինչ է հարկաւոր անել, — ասաց օֆիցէրը գնալով իր վագօնը և ժիր-ժիր ճօճելով կարճ ձեռքերը:

Այդ ժամանակ անցաւ կօնդուկորը սուլիչը ձեռքին. լըսուեց վերջին զանգը ու սուլոցը և պլատֆորմում կանգնած ճանապարհ դնողների մէջ ու կանանց վագօնում սուգ ու շիւան բարձրացաւ: Նեխլիւդովը կանգնած էր պլատֆորմում Տարասի կողքին և նայում էր, թէ ինչպէս միմեանց յետեից նրա մօտով կամաց-կամաց անցնում էին վագօնները վանդակապատ

պատուհաններով, որոնց միջով երևում էին ածիլուած առնական գլուխներ: Եթոյ նրան հասաւ կանանց առաջին վագօնը, որի պատուհանում երևում էին բաց և ծածկած կանացի գլուխներ, յետոյ երկրորդ վագօնը, որտեղից դարձեալ լուսում էր նոյն կանացի հեծեծանքը, յետոյ այն վագօնը, որտեղ գտնուում էր Մասլովան: Նա միւսների հետ կանգնած էր պատուհանի մօտ, նայում էր Նեխլիւդովին և աղիողորմ ժպտում նրան:

XXXVII

Մինչև այն գնացքը, որով ճանապարհ էր ընկնելու Նեխլիւդով, գեռ երկու ժամ կար: Սկզբում նա մտադիր էր այդ ժամանակամիջոցում գնալ քրոջ մօտ, բայց այժմ, այդ առաւտուայ տպաւորութիւններից յետոյ, նա այն աստիճան յուղուած ու ջարդուած էր, որ նստեց մի բազմոցի վրայ առաջին կարգի ուղեսորների գահինձում և բոլորովին անսպասելի կերպով այնպիսի քնկուութիւն զգաց, որ շուռ եկաւ մի կողքի վրայ, ձեռքը զբեց երեսի տակը ու իսկոյն և եթ քննեց:

Նրան զարթեցրեց մի լաքէ՛ թուակիր ֆրակը հագին ու անձեռոցիկը ձեռքին:

—Պարոն, պարոն, գուք չէք իշխան Նեխլիւդովը: Մի տիկին ձեզ փնտուում է:

Նեխլիւդով՝ աչքերը տրորելով վեր թուաւ տեղից և յիշեց որտեղ լինելը և այն բոլորը, որ տեղի էր ունեցել այդ առաւտուա:

Նրա յիշողութեան մէջ պատկերանում էին՝ կալանաւորների յուղարկախումբը, մեռելները, վանդակապատ վագօնները և այնտեղ փակուած կանացի, որոնցից մէկը անօգնական չարչարւում է երկունքի մէջ, իսկ միւսը աղիողորմ կերպով ժըպտում է իրան երկաթէ վանդակի միջով: Իսկ իրականութեան մէջ բոլորովին ուրիշ պատկեր էր նրա առաջին. մի երկար սեղան, որի վրայ դարսած էին շիշեր, անօթներ, աշտանակներ և կերակրասարքեր, սեղանի շուրջը իրար անցնող ժիր լաքէյներ, գահինձի խորքում, պտուղներով լի անօթների ու շիշերի յետեին և պահարանի առջեռում կանգնած բուֆէտ պահողը և բուֆէտի մօտ կանգնած ճանապարհորդների մէջքերը:

Այն ժամանակ, երբ Նեխլիւդովը պառկած տեղից վեր թուաւ նստեց ու սկսեց քիչքիչ ուշքի գալ, նա նկատեց, որ դահլիճում եղողները բոլորն էլ հետաքրքրութեամբ նայում են դռան մէջ կատարուող ինչ որ մի բանի: Նա էլ նայեց այն կողմը և տեսաւ մարդկանց մի խումբ, որոնք ներս էին բե-

բում բազկաթոռի մէջ դրած մի տիկնոջ, որ գլխին փաթաթած ունէր շղարչէ քօղի Առջեկ բեռնակիրը մի լաքէյ էր, որ ծառնօթ թուաց Նեխլիւդովին։ Յետևի բեռնակիրն էլ ոսկերիզապատ զլսարկով մի դմանպան էր, նոյնպէս ծանօթ Նեխլիւդովին։ Բազկաթոռի յետևից գալիս էր գոգնոցաւոր ու խոպոպաւոր մի գողտրիկ աղախին, որ ձեռքին ունէր մի կապոց—ինչ որ կոլոր բան կաշուէ ամանում ու հովանոցների Նրա յետևից կուրծքը դուրս ցցած և ճանապարհորդական զլսարկ դրած գալիս էր իշխան Կօրչագինը իր հասաւ պոչներով ու կաթուածահար վզով և ապա Միսսին, Միշան (Նրանց ազգականը) և Նեխլիւդովի ծանօթ դիւնագէտ Օստէնը իր երկար վզով, դուրս պրծած խոչափողով և մշտական ուրախ տեքով ու տրամադրութեամբ։ Նա ինչ որ ասում էր ժապացող Միսսիին ազդու կերպով, բայց ակներեաբար կատակով։ Ամենից վերջը գալիս էր բժիշկը, բարկացած ծիելով բերնի պապիրոսը։

Կօրչագինները իրանց քաղաքամերձ կալուածքից տեղափոխում էին իշխանի քենու կալուածքը, որ գտնւում էր Նեխնի-Նօվգորոդի երկաթուղու դժի վրայ։

Ծառաները, աղախինը և բժիշկը անցան գնացին կանանց սենեակը, հետաքրքրութիւն և պատկառանք ազգելով բոլոր ներկայ եղողներին։ Իսկ ծեր իշխանը նստեց մի սեղանի մօտ ու իսկոյն ենթ կանչելով լաքէներից մէկին՝ սկսեց ինչ որ պատուիրել նրան, Միսսին ու Օստէնը նոյնպէս մնացին սեղանատանը և այն է ուղում էին նստել, որ դռան մէջ տեսան մի ծանօթ կնոջ ու գնացին նրան ընդ առաջ։ Այդ ծանօթ կինը Նատալիա իվանօվսան էր։ Նատալիա իվանօվսան, որ հետը բերել էր Ազգագիւնա Պետրօվսային, մտաւ սեղանատուն, չորս կողմը նայելով։ Նա դրեթէ միաժամանակ տեսաւ Միսսիին ու իր եղբօրը։ Նա առաջ մօտեցաւ Միսսիին, միայն զլսով անելով եղբօրը։ Բայց համբուրուելով Միսսիի հետ, նա իսկոյն դիմեց Նեխլիւդովին։

— Վերջապէս գտայ քեզ,—ասաց նա,

Նեխլիւդովը վեր կացաւ, բարեեց Միսսիին, Միշային Օստէնին և սկսեց կանգնած խօսել Միսսին պատմեց նրան, թէ ինչպէս իրանց տունը գիւղում այրուեց, այնպէս որ ստիպուած են տեղափոխուել մօրաքրոջ մօտ։ Օստէնը այդ առիթով սկսեց մի ծիծաղելի անէկոտ պատմել հրդեհի մասին։

Նեխլիւդովը, ականջ չը դնելով Օստէնի ասածին, դիմեց քրոջը.

— Շատ ուրախ եմ, որ եկար։

— Ես վաղուց եմ եկել, — ասաց նաև — Ես ու Ազրաֆենա Պետրօվնան, — նա ցոյց տուեց Ազրաֆենա Պետրօվնայի վրայ, որ գլխարկը գլխին ու վատէրպուֆը հագին փաղաքշանդի և արժանապատւութեան արտայայտութեամբ և քաշուելով հեռուից զլուխ տուեց Նեխլիւդովին, չուզելով խանգարել նրան, — մեռանք քեզ փնտուելով:

— Իսկ ես այսուեղ թիկն տուեցի ու քունս տարաւ Շատ ուրախ եմ, որ եկար, — կրկնեց Նեխլիւդովը: — Ես ուզում էի քեզ նամակ գրել, մինչև անգամ սկսեցի գրել, — ասաց նաև:

— Նամակ, — հարցրեց քոյրը վախուրած: — Ի՞նչի մասին:

Միսսին ու կաւալէրները, նկատելով, որ քոյր ու եղրօր մէջ մտերիմ խօսակցութիւն է սկսում, մի կողմ քաշուեցին. Իսկ Նեխլիւդովը ու քոյրը նստեցին պատուհանի մօտ մի թաւշապատ բազմոցի վրայ ում՝ որ բաների, պլէզի ու զլխարկամանի կողքին:

— Երէկ, ձեզնից հեռանալուց յետոյ, ուզում էի վերադառնալ ու ներողութիւն ինդրել, բայց չը գիտէի, թէ ինչպէս կ'ընդունի նա, — ասաց Նեխլիւդովը: — Ես լաւ չէի խօսում քո մարդու հետ, և այդ յետոյ տանջում էր ինձ, — ասաց նա:

— Ես գիտէի, ես հաւատացած էի, — ասաց քոյրը, — որ դու չէիր ուզում: Դու հօ գիտես...

Եւ աչքերը արտասուակալեցին ու նա բռնեց եղրօր ձեռքը: Այդ նախարասութեան մէջ քնքութիւն կար. Նեխլիւդովը լիովին հասկացաւ քրոջ ասածը ու խանդաղատուեց այդ ասածի իմաստից: Քրոջ խօսքերի իմաստն այն էր, որ բայց դէպի մարդը տածած սէրից, որով տագորուած է նրա ամբողջ էռութիւնը, նրա համար մեծ նշանակութիւն ունի և շատ թանգ է նաև դէպի եղրայրը տածած սէրը և որ ամեն մի գժտութիւն նրանց մէջ՝ ծանր տանջանք է իր համար:

— Շնորհակալ եմ քեզնից, չնորհակալ եմ: Ախ, եթէ իմանայիր ինչ տեսայ այսօր, — ասաց նա յանկարծ յիշելով երկրորդ մեռած կալանաւորին: — Երկու կալանաւորի մահացրեցին:

— Ի՞նչպէս թէ մահացրեցին:

— Ուզգակի մահացրեցին: Այս շոքով բերեցին կայարան և երկուաը միան ճանապարհին արևահարութիւնից:

— Զէ: Ճիշտ: Այսօր: Հէնց այժմ:

— Այս, հէնց այժմ: Ես իմ աչքովս տեսայ նրանց դիակ-ները:

— Բայց ինչու մահացրեցին: Ո՞վ մահացրեց, — հարցրեց նատալիա իվանօվսան:

— Նրանք մահացրին, որոնք զօռով կայարան բերեցին նը-
րանց, — զրգուած ասաց Նեխլիւդովը, զգալով, որ քոյրը այդ
բանի վրայ էլ նայում է իր մարդու հայեացքով:

— Այս, Տէր Աստուած, — ասաց Ագրաֆենա Պետրօվնան,
որ մօտեցել էր նրանց:

— Եյս, մենք ամենաչնչին գաղափար անգամ չունենք, թէ
ինչեր են կրում այդ խեղճ մարդիկը, իսկ այդ պէտք է իմա-
նալ, — աւելացրեց Նեխլիւդովը, նայելով ծեր իշխանին, որ ան-
ձեռոցիկը զգի տակիցը կապած և շիշը առաջին՝ նստած էր սե-
ղանի մօտ և հէնց այդ ժամանակ յետ նայեց Նեխլիւդովի վրայ:

— Նեխլիւդով, — ձայն տուեց նա, — չէք ուզի մի քիչ զո-
վանալ: Ճանապարհ գնալուց առաջ շատ լաւ է:

Նեխլիւդովը հրաժարուեց ու շուռ եկաւ:

— Շատ լաւ, բայց ինչ կարող ես անել, — շարունակեց Նա-
տալիա Խվանօվնան:

— Ինչ որ ձեռքից գայ, Զը գիտեմ, թէ ինչ, բայց զգում
եմ, որ պարտական եմ մի բան անել: Եւ ինչ որ կարողանամ,
կ'անեմ:

— Լաւ, ես հասկանում եմ: Բայց սրանց հետ, — ասաց
Քոյրը՝ ժպտալով և աչքերով Կօրչագինի վրայ ցոյց տալով, — մի-
թէ բոլորովին վերջացրել ես:

— Բոլորովին, և, կարծում եմ, նրանք էլ չեն ցաւում այդ
բանի մասին:

— Ափսոս: Ես ցաւում եմ: Ես Միսսիին սիրում եմ: Բայց
լաւ, դիցուք այդ այդպէս լինի: Սակայն ինչու ես ուզում կա-
պել ձեռք ու ուզդ, — աւելացրեց նա վախլիւլով: — Ինչու ես
գնում:

— Գնում եմ, որովհետեւ պէտք է գնալ, — լուրջ ու չոր կեր-
պով ասաց Նեխլիւդովը, կարծես ուզելով ընդհատել այդ խօ-
սկցութիւնը:

Բայց իսկոյն և եթ նա ամօթ զգաց քրոջ հետ այդպէս
սառնութեամբ խօսելու համար և ինչու չասեմ նրան այն բոլո-
րը, ինչ որ մտածում եմ, — մտածեց նա: — Եւ թող Ագրաֆենա
Պետրօվնան էլ լսից, — ասաց նա ինքն իրան, նայելով պառաւ
աղախնի վրայ:

Ագրաֆենա Պետրօվնայի ներկայութիւնը աւելի ես դրդեց
նրան կրկնել քրոջը իր վճիբը:

— Դու խօսում ես կատիւշայի հետ պսակուելու դիտաւո-
րութեանս մասին: Այս, ես վճուել եմ պսակուել, բայց նա հաս-
տատ կերպով և որոշակի մերժեց իմ առաջարկութիւնը, — ասաց

նա և նրա ձայնը դողաց, ինչպէս դողում էր միշտ, երբ նա խօսում էր այդ բանի մասին,—նա չի ուզում զոհողութիւն ընդունել ինձանից, իսկ ինքը, իր դրութեան մէջ, շատ բան է զոհում դրանով ևս չեմ կարող ընդունել այդ զոհողութիւնը, եթէ մի բոպէական բան է այդ, Ուստի և գնում եմ նրա յետեւց և կը լինեմ այնտեղ, ուր նա կը լինի, և որքան ձեռքից գայ կ'օգնեմ նրան, կը թեթևացնեմ նրա վիճակը:

Նատալիա իվանօվսան ոչինչ չասաց, Ազրաֆենա Պետրովսան հարցական կերպով նայում էր Նատալիա իվանօվսային ու թափ տալիս գուխը: Այդ ժամանակ կանանց սենեակից գեղեցկադէմ լաքէյ Ֆիլիպպը և դռնապանը դուրս բերեցին բազկաթոռի վրայ իշխանուհուն: Նա կանգնեցրեց իրան տանողներին, ձեռքով կանչեց իր մօտ Նեխլիւդովին և աղիողորմ մղկտալով մեկնեց նրան մատանիազարդ սպիտակ ձեռքը, սարսափով սպասելով պինդ սղմումի:

— Еրօսանտալ! (սարսափելի է),—ասաց նա շոքի մասին: — Զեմ կարողանում դիմանալ: Ըթ ըլիմատ առ այս կլիման ինձ սպանում է):—Եւ խօսելով Ռուսաստանի կլիմայի սարսափելութեան մասին ու հրաւիրելով Նեխլիւդովին գնալ իրանց մօտ, նա նշան արեց իրան տանողներին:—Տեսէք, անպատճառ եկէք, աւելացրեց նա, հեռանալիս շուռ տալով դէպի Նեխլիւդովը իր երկար դէմքը:

Նեխլիւդովը դուրս եկաւ պլատֆորմը: Իշխանուհուն տանողները ծոռւեցին դէպի աջ, դէպի առաջին կարգի վագօնը: Իսկ Նեխլիւդովը իր բաները տանող ծանրոցակրի հետ և Տարսաը իր տոպրակներով գնացին դէպի ձախ:

— Սա է իմ ճանապարհի ընկերը, — ասաց Նեխլիւդովը քրոջը, ցոյց տալով Տարասի վրայ, որի պատմութիւնը առաջուց պատմել էր նրան:

— Միթէ երրորդ կարգովն ես գնում, — հարցրեց Նատալիա իվանօվսան, երբ որ Նեխլիւդովը կանգ առաւ երրորդ կարգի վագօնի առաջ և ծանրոցակրին ու Տարասը մտան այնտեղ:

— Այո, այսպէս աւելի յարմար է ինձ համար, այսաեղ Տարասի հետ միասին կը լինեմ: — ասաց Նեխլիւդովը: — Հա, չը մոռանամ, — աւելացրեց նա, — Կուզմինսկոյէ կալուածում դեռ հողը չեմ տուել գիւղացիներին, այնպէս որ եթէ մեռնեմ՝ քո որդիները կը ժառանգեն:

— Ինչեր ես ասում, Դմիտրիյ, — ասաց Նատալիա իվանօվսան:

— Իսկ եթէ տամ էլ, այնքանը միայն կարող եմ ասել, որ

մացած բոլորը քո երեխաներինը կը լինի, որովհետեւ դժուար թէ ես ամուսնանամ: Իսկ եթէ ամուսնանամ՝ էլ, երեխաներ չեմ ունենայ... այնպէս որ...

—Դմիտրիի, խնդրում եմ, այդպիսի բաներ մի ասիլ,— պնդում էր Նատալիա Խվանօվնան, և սակայն Նեխլիւդովը տեսնում էր, որ նա ուրախացաւ լսելով իր ասածը:

Առաջի կողմում առաջին կարգի վագօնների դիմացը միայն մարդկանց մի փոքրիկ խումբ էր մնացել կանգնած, որ դեռ նայում էր այն վագօնի վրայ, ուր ներս էին տարել իշխանուհի Կօրչագինային: Մնացած մարզիկ ամենքը տեղաւորուել էին վագօններում: Ուշացած ուղերձները շտապ-շտապ վաղում էին գեպի վագօնները, թխթխացնելով պլատֆորմի տախտակները, և կօնդուկտօրները փակում էին վագօնների դռները, առաջարկելով գնացողներին ներս մտնել, իսկ ճանապարհ դնողներին դուրս գալ:

Նեխլիւդովը մոտ արեից սաստիկ տպացած ու գարշահոտ վագօնը և իսկոյն հեթ գուրս եկաւ կանգնեց վագօնի արտաքին մասում:

Նատալիա Խվանօվնան իր մօդայաձև գլխարկով ու վերարկուով կանգնած էր վագօնի դիմադր Ազրաֆենա Պետրօվնայի կողքին և ակներեաբար խօսակցութեան նիւթ էր փնտում ու չէր կարողանում գտնել: Զէր կարելի նոյն իսկ ասել «έστινε» (նամակ գրի), որովհետեւ նա ու եղբայրը վազուց արդէն ծիծաղում էին ճանապարհորդների այդ սովորական խօսքի վրայ: Դրամական գործերին ու ժառանգութեան վերաբերեալ խօսակցութիւնը իսկոյն չքայրեց նրանց մէջ սկսուած քնքոյշ քոյրեղբայրական յարաբերութիւնները: Նրանք այժմ միմեանց վերաբերմամբ մի տեսակ խորթութիւն էին զգում: Այնպէս որ Նատալիա Խվանօվնան ուրախացաւ, երբ գնացքը շարժուեց և երբ նա կարող էր արդէն, գլխով անելով, տխուր ու փաղաքշական դէմքով ասել «գնաս բարե, Դմիտրիյ, գնաս բարե»: Բայց հէնց որ վագօնը հեռացաւ, նա սկսեց մտածել, թէ ինչպէս հաղորդի ամուսնուն իր ու եղբօր խօսակցութիւնը, և դէմքը լուրջ ու մտահոգ արտայայտութիւն ստացաւ:

Նեխլիւդովն էլ, թէն ոչինչ, բայց ամենաբարեացակամ զգացմունքներից, չէր տածում դէպի քոյրը և ոչինչ չէր ծածկում նրանից, նմանապէս այժմ նեղւում էր նրա ներկայութեամբ և ուղում էր որքան կարելի է շուտով ազատուել նրանից: Նա զգում էր, որ այլևս գոյութիւն չունի այն Նատաշան, որ մի ժամանակ այնքան մօտ էր իրան, այլ կայ միմիայն իր համար օտար և անախորժ մե ու փրչոտ մարդու ստրկուհին:

Նա պարզ տեսաւ այդ, որովհետեւ Նատալիա Իվանօվնայի դէմքը առանձնապէս աշխուժացաւ միայն այն ժամանակ, երբ ինքը խօսեց այն բանի մասին, որ Նետաքրքրեցնում էր նրա մարդուն—հողը գիւղացիներին տալու և ժառանգութեան մասին, եւ այդ տիրեցրեց Նեխլիւդովի սիրտը:

XXXVIII

Ամբողջ օրուայ ընթացքում կիզիչ արեի տակ տաքացած և բազմութեամբ լի՛ երրորդ կարգի մեծ վագօնում այնպէս խեղուկ չոք էր, որ Նեխլիւդօվը չը մտաւ վագօնը, այլ մնաց դրսեւում: Բայց դրսեւումն էլ տօթ էր, և Նեխլիւդօվը ամբողջ կրծով չնչեց միայն այն ժամանակ, երբ վագօնները դուրս եկան տների արանքից և սկսեց փշել հակառակ քամի: «Այս, մահացրեցին», կրկնեց նա մտքում՝ բրոջը ասած խօսքերը: Եւ նրա երեակայութեան մէջ այդ օրուայ բոլոր տպաւորութիւնների մէջից արտասովոր կենդանութեամբ զարթնեց երկրորդ մեռած կալանաւորի գեղեցիկ գէմքը շրթունքների ժպատուն արտայայտութեամբ, ճակատի խիստ արտայայտութեամբ և ածիլած, կապոյտին տուող զանզի տակին երեցող փոքրիկ ու ամուր ականջով: «Եւ ամենասարսափելին այն է, որ սպանեցին, բայց ոչ ոք չը գիտի, թէ ով է սպանողը: Այդ կալանաւորներին, ինչպէս և միւս բոլոր կալանաւորներին, տանում էին Մասլեննիկօվի կարգադրութեամբ: Մասլեննիկօվը հաւանականորէն ըստ իր սովորութեան արել էր իր կարգադրութիւնը, սոտրագրել էր տպած մակագրութեամբ թուղթը իր յիմար սեթենթ սոտրագրութեամբ և, ի հարկէ, ամեննեին մեղաւոր չի համարի իրան այդ բանումն եւս աւելի մեղաւոր չի կարող համարել իրան կալանաւորներին քննող բանտային բժիշկը: Նա ճշորէն կատարել էր իր պարտականութիւնը, ջոկել էր թոյլերին և չէր կարող ամեննեին նախատեսել ոչ այն, որ այդպիսի սարսափելի չոք կ'անի, ոչ էլ այն, որ նրանց այդքան ուշ կը տանեն ու այդպիսի մեծ խմբով: Բանտապթաը... բայց բանտապետը միմիայն կատարել էր իրան տուած հրահանգը, որ այս ինչ օրը այս ինչ թուով տաժանապարտներ ու աքսորականներ, տղամարդ ու կին՝ ուղարկեն կայարան: Զէր կարող մեղաւոր լինել նաև ուղեկցող օֆիցէրը, որի պարտականութիւնը կայանում էր նրանում, որ հաշուով այս ինչ տեղը ընդունէր այս ինչ թուով կալանաւորներ և մի որոշեալ տեղ յանձնէր նրանց նոյն թուով: Նա տանում էր կալանաւորներին, ինչպէս սովորաբար տանում էին ու ինչպէս կանոնով պահանջւում էր, և

Հեր կարող ամենին նախատեսել, որ այնպիսի ուժեղ մարդիկ, ինչպէս այն երկուսը, որոնց տեսել էր Նեխիլւդօվը, չեն դիմանալ ու կը մեռնեն ճանապարհին: Ոչ ոք մնջաւոր չի, — և սակայն մի քանի մարդ մահացան և մահացան այնուամենայնիւ այդ մահերի նկատմամբ անմեղ մարդկանց չնորհիւ:

«Այդ բոլորը նրանից յառաջացաւ, — մտածում էր Նեխիլւդօվը, — որ ամենքը՝ թէ նահանգապետները, թէ բանտապետները, թէ թաղական ոստիկանները, թէ փողոցային ոստիկանները՝ իրանց առջև տեսնում էին ոչ թէ իրանց նման մարդկանց և իրանց պարտականութիւնները նրանց նկատմամբ, այլ իրանց ծառայութիւնը և այդ ծառայութեան պահանջները, որ նրանք գերադասում էին մարդկային յարաբերութիւնների պահանջներից: Դրանումն է ամեն ինչ», — մտածում էր Նեխիլւդօվը:

Նեխիլւդօվը այնքան տարուել էր այդ մտքերով, որ չը նկատեց եղանակի փոփոխութիւնը, — արել ծածկուել էր առջեր ցածիկ, բգկուած ամպի յետեին, և հորիզոնի արևմտեան կողմից առաջ էր խաղում միապաղաղ բացմոփրագոյն մի թուխալ, որից այնտեղ, հեռուում, շեղ գծերով անձրև էր թափուում դաշտերի ու անտառների վրայ: Թուխալից խոնաւ, անձրևային օգի հոտ էր զալիս Երբեմն-Երբեմն կայծակը կտրատում էր թուխալը, և բանի գնուում վագօնների դղրդոցին աւելի ու աւելի յաճախ էր խառնուում ամպերի որոտը: Թուխալը հետզհետէ աւելի ու աւելի էր մօաենում և քամու բերած անձրեի շեղ կաթիլները սկսեցին բծերով ծածկել վագօնի տախտակամածի դուրս ցցուած մասը և Նեխիլւդօվի վերաբկուն: Նա անց կացաւ միւս կողմը և Ներս չնչելով վաղուց անձրեի կարօտ հողի խոնաւ զովութիւնն ու հացահատիկների հոտը, նայում էր յետյետ վագող պարտէզներին, անտառներին, հաճարի գեղնաւուն արտերին, վարասկի գեռ կանաչ շերտերին և ծաղկող մուգկանաչ գետնախնձորի ու ակօսներին: Կարծես ամեն բան ծածկուել էր փայլուկով: Կանաչը աւելի կանաչ էր դարձել դեղինը՝ աւելի դեղին, սեր՝ աւելի սե:

— Սրի, էլի արի, — ասում էր Նեխիլւդօվը, ու բախութեամբ նայելով անձրեի բարերար ազգեցութեան տակ վերակենդանացող դաշտերին, պարտէզներին ու բանջարանոցներին:

Վարար անձրել երկար չը տեսց: Թուխալը մասամբ թափուեց, մասամբ անց կացաւ գնաց, և թաց հողի վրայ ընկնում էին արդէն անձրեի վերջին ուղղաձիգ, անընդմէջ ու մանր կաթիլները: Արել նորից դուրս նայեց, ամեն ինչ սկսեց փայլել, իսկ արևելքում հորիզոնի վրայ աղեղ կապեց ցածիկ, բայց

պայծառ և միայն մի ծայրում բնդհատուող ծփածանը, որի
մէջ աչքի էր ընկնում մանիշակի գոյնը:

— Հա, ինչի մասին էի մտածում,— հարցրեց ինքն իրան
Նեխիլովը, երբ բնութեան այդ բոլոր փոփոխութիւնները
վերջացան ու զնացքը իջաւ դէպի բարձր զառիվայրով փոս-
րակը:

— Հա, ես այն էի մտածում, որ այդ ամենքը՝ բանտապե-
տը, ուղեկցող զինուորները, բոլոր այդ ծառայողները, որոնք
մեծ մասամբ հեզ ու բարի մարդիկ են, չարասիրոտ են դար-
ձել:

Նա յիշեց Մասլենիկօվի անտարբերութիւնը, երբ ինքը
պատմում էր նրան, թէ ինչեր է կատարում բանտում, բան-
տապետի խստութիւնը, ուղեկցող օֆիցէրի դաժանութիւնը,
երբ նա չէր թողնում, որ կալանաւորները նստեն սայլի վրայ
և երբ ուշադրութիւն չը դարձրեց այն բանի վրայ, որ զնաց-
քում երկոնքից տանջւում է մի կին, Այդ բոլոր մարդիկ, ակ-
ներեաբար, անթափանցելի էին մարդասիրութեան զգացմոնքի
համար, «ինչպէս այս սալայատակած հողը անձրեկ համար»,—
մտածում էր Նեխիլովը, նայելով փոսորակի գոյնզգոյն քա-
րերով սալած զարդվայրին, որի վրայով անձրեաջուրը հոսում
էր փոքրիկ հեղեղատներով, չը կարողանալով ծծուել հողի մէջ,
«Գուցէ և պէտք է փոսորակները սալայատակել բայց մարդ
տիրում է նայելով այդ բուսազուրկ հողին, որ կարող
էր հացահատիկ, խոտ, թուփ ու ծառ բուսցնել, ինչ-
պէս փոսորակի վերև գտնուած հողերը, Նոյնն է և մարդ-
կանց վերաբերմամբ—մտածում էր Նեխիլովը—Ամբողջ հար-
ցը նրանումն է, որ մարդիկ կարծում են, թէ կան դրու-
թիւններ, որոնց մէջ կարելի է մարդկանց հետ վարուել
առանց սիրոյ. իսկ այդպիսի զրութիւններ չը կան, իրե-
րի հետ կարելի է վարուել առանց սիրոյ,—կարելի է կտրատել
ծառերը, աղիւս թրծել, երկաթ կռել առանց սիրոյ, բայց մարդ-
կանց հետ չի կարելի վարուել առանց սիրոյ, ինչպէս մնղուննե-
րի հետ՝ առանց զգուշութեան: Այդպէս է մեղուների առանձ-
նայատկութիւնը, եթէ անզգոյշ վարուես նրանց հետ, թէ նրանց
կը վեսան թէ քեզ: Նոյնն է և մարդկանց նկատմամբ Եւ այդ
չի կարող ուրիշ կերպ լինել, որովհետեւ փոխադարձ սէրը մարդ-
կային կեանքի հիմնական օրէնքն է: Ճիշտ է, մարդ չի կարող
ինքն իրան ստիպել, որ սիրի, ինչպէս որ կարող է ստիպել ի-
րան, որ աշխատի. բայց դրանից չի կարելի եղբակացնել, թէ
կարելի է մարդկանց հետ վարուել առանց սիրոյ, մանաւանդ

երբ որ և է բան ես պահանջում նրանցից: Եթէ սէր չես զգում դէպի մարդիկ, հանգիստ նստիր տեղդ, —մտածում էր Նեխլիւ դօվը, դիմելով ինըն իրան, —զբաղուիր ինքդ քեզնով զանազան իրերով, մի խօսքով ինչով կ'ուզես, բայց ոչ մարդկանցով: Ինչ պէս անվեսա և օգտաւէտ կերպով կարելի է ուտել միայն այն ժամանակ, երբ մարդ ուզում է ուտել, այնպէս էլ մարդկանց հետ կարելի է անվեսա ու օգտաւէտ կերպով վարուել միայն այն ժամանակ, երբ մարդ սիրում է նրանց: Բաւական է թոյլ տաս քեզ վարուել մարդկանց հետ առանց սիրոյ, ինչպէս դու երէկ վարուեցիր փեսայիդ հետ, և կը տեսնես, որ սահման չի լինի անդժութեանդ ու գաղանութեանդ ուրիշների վերաբերմամբ, ինչպէս ես տեսայ այսօր, և սահման չի լինի սրտիդ տանջանքին, ինչպէս ես իմացայ ամբողջ իմ կեանքից: Այս, այս, այդպէս է, —մտածում էր Նեխլիւդօվը: —ի՞նչ լաւ է, ինչ լաւ է», —կրկնում էր նա ինքն իրան, կրկնակի հաճոյք դգալով տանջող շաբից յետոյ տիրած զովութիւնից և իրան վաղուց զբաղեցնող հարցի վերաբերմամբ պարզ գիտակցութեան ամենաբարձր աստիճանին հասնելուց:

XXXIX

Այն վագօնը, ուր տեղ էր ընտրել Նեխլիւդօվը, կիսով չափ լիքն էր ուղերներով: Սյդտեղ կային ծառաներ, արհետաւորներ, բանուորներ, մսադործներ, հրէաներ, գործակատարներ, կինարմատներ, բանուորների կանայք, մի զինուոր, երկու աղջիկպարոններ, մէկը՝ ջահէլ, միւսը հասակաւոր՝ մերկ թեւին ապարանջաններ անց կացրած, և մի խիստ կերպարանքով պարոն՝ կօկարդաւոր սև գլխարկով: Դրանք բոլորը՝ տեղաւորուելուց յետոյ հանդստացել էին և հանդարատ նստած՝ ումանք արեածաղկի կորիդ էին չոթում: ումանք պապիրոս ծխում, ումանք էլ տաք-տաք խօսում հարևանների հետ:

Տարասը երջանիկ կերպարանքով նստած էր անցքից դէպի աջ, տեղ պահելով Նեխլիւդօվի համար, և տաք-տաք խօսում էր զիմացը նստած մի միանուտ մարդու հետ, որ բաց էր արել հազի մահուդէ բանկոնի կոճակները և որ, ինչպէս Նեխլիւդօվը յետոյ իմացաւ, պարտիզանն էր ու գնում էր գաւառը, ուր նրան տեղ էին առաջարկել: Տարասին չը հասած՝ Նեխլիւդօվը կանգ առաւ անցքում մի սպիտակամիրուք պատկառելի ծերունու կողքին, որ խօսում էր մի գիւղական շորեր հազած ջահէլ կնոջ հետ: Կնոջ կողքին, ոտները յատակից մի

թղաչափ բարձր, նստած էր մի եսթ տարեկան աղջիկ նոր շռ-
րեր հագած ու գրեթէ սպիտակ մազերի բարակ ծամով և շա-
րունակ կորիզ էր չոթում: Յետ նայելով Նեխիւդօվի վրայ՝ ծե-
րունին իր նստած լարուուն նստարանի վրայից հաւաքեց հա-
գուստի մի փէշը ու քաղցրութեամբ ասաց.

—Համեցէք նստէք:

Նեխիւդօվը չնորհակալութիւն յայտնեց ու նստեց նրա
ցոյց տուած տեղը: Հէնց որ Նեխիւդօվը նստեց, գիւղացի կի-
նը շարունակեց ընդհատուած պատմութիւնը, նա պատմում
էր, թէ ինչպէս էր քաղաքում նրան ընդունել իր մարդը, որի
մօտից վերադառնում էր այժմ:

—Մէկ բարեկենդանին էի գնացել, մէկ էլ, Աստուած յա-
ջողեց հիմա գնացի, —ասում էր նա: —Հիմա, Աստուած յաջողի,
մէկ էլ Ծննդեան տօներին կ'երթամ:

—Լաւ ես անում, —ասաց ծերունին. գեղջկուհուն, յետ նայ-
ելով Նեխիւդօվի վրայ, —պէտք է մէկ-մէկ տեսութեան գնաս,
թէ չէ ջահէլ մարդ է, քաղաքում զիսահան կ'անեն:

—Զէ, պապի, իմ մարդը այդպիսիներից չի: Այդպիսի գը-
ժութիւններ չի սիրում, կարծես ամաչկոտ աղջիկ լինի: Ինչ
փող ստանում է՝ մինչև վերջին կոռէկը տուն է ուղարկում:
Այնպէս ուրախացաւ այս լակոտին տեսնելով, որ էլ չեմ կա-
րող ասել! —ասաց գեղջկուհին ժպտալով:

Աղջիկը, որ չոթած կորիզները դուրս թքելով լսում էր
մօր ասածը, իր հանդիստ ու խելօք աշքերով նայեց ծերուկի
ու Նեխիւդօվի երեսին, կարծես հաստատելով մօր խօսքերը:

—Իսկ եթէ խելօք է, աւելի լաւ, —ասաց ծերուկը: —Իսկ
այդպիսի բաներով չի պարապում, —աւելացրեց նա, աշքերով
ցոյց տալով անցքի միւս կողմում նստած մարդ ու կնոջ վրայ,
որոնք ակներեաբար գործարանային բանուորներ էին:

Մարդը, գլուխը դէպի յետ ցցած ու շիշը բերնին կործած,
ծծում էր օդին, իսկ կինը, այն տոպրակը բռնած, որի մէջից
հանել էին շիշը, յառած աշքերով նայում էր մարդուն:

—Զէ, իմ մարդու ոչ խմում է, ոչ ծխում, —ասաց ծերուկի
խօսակից կինը, առիթից օգտուելով մարդուն մի անգամ էլ
դովելու: —Նրա նման մարդ քիչ կը գտնուի: Հազարի մէջին կը
ջոկուի, —ասաց նա, գիմելով նաև Նեխիւդօվին:

—Աւելի լաւ, —կրկնեց ծերուկը, որ նայում էր օդի խմող
բանուորին:

Բանուորը, իր բաժինը խմելով, շիշը տուեց կնոջը: Կինը
վերցրեց շիշը և, ծիծաղելով ու գլուխը թափ տալով, նոյնպէս

կործեց բերնին, Նելատելով իր վրայ Նեխլիւդօվի ու ծերուկի հայեացքը, բանուորը դիմեց նրանց.

—Հը՞, պարոն, մեր խմելուն էք նայում: Երբ որ աշխատում ենք, ոչ ոք չի տեսնում, իսկ երբ խմում ենք, ամենքը տեսնում են: Չեռքիս աշխատանքով փող եմ վաստակել ու խմում եմ և կոսջս էլ համեցէք անում: Պրծաւ գնաց:

—Այս, այս,—ասաց Նեխլիւդօվը, չիմանալով, թէ ինչ պատաժանի նրան:

—Ճիշտ եմ ասում, պարոն: Կինս կարգին կնիկ է: Ես գոհ եմ նրանից, որովհետեւ խղճում է ինձ: Ճիշտ եմ ասում, թէ չէ, Մավրա:

—Դէ լաւ, առ իլ չեմ ուղում,—ասաց կինը, տալով նըրան շիշը:—Ի՞նչ ես յիմար-յիմար բլբլացնում,—աւելացրեց նա:

—Այ այսպէս է,—շարունակում էր բանուորը,—կարգին, անդին կնիկ է, բայց մէկ էլ տեսնես կը սկսի ճոճոալ ակներին իւղ չը քսած սայլի նման: Ճիշտ չեմ ասում, Մավրա:

Մավրան ծիծաղեց ու հարբածի շարժումով թափ տուեց ձեռքը:

—Այդ է հա, դուրս տուր գլխիցդ...

—Այ այսպէս է, մի առժամանակ կարծես անդին կնիկ է, բայց հէնց որ սանձերը պոչատակն ընկան, այնպիսի բան կ'անի, որ մարդու մաքովն էլ չի անց կնայա... Ճիշտ չեմ ասում: Իմոդրեմ ինձ ներէք, պարոն: Մի քիչ խմել եմ, ինչ անեմ...— ասաց բանուորը ու թեք ընկաւ քնելու, գլուխը գնելով ժըպտուն կնոջ ծնկների վրայ:

Նեխլիւդօվը մի քիչ ժամանակ մնաց նստած ծերունու կողքին, որ պատմեց, թէ ինը վառարան շնող է, 53 տարի է որ աշխատում է և իր կեանքումը անթիւ վառարաններ է շինել, իսկ այժմ սւզում է հանգստանալ, բայց ժամանակ չունի: Քաղաքիցն է գալիս, որտեղ զաւակներին բանի էր գրել, իսկ այժմ գնում է գիւղը անեցոց տեսնելու: Երբ ծերուկը վերջացրեց ասելիքը, Նեխլիւդօվը վեր կացաւ ու գնաց այն տեղը, որ Տարասը պահում էր նրա համար:

—Նստէք, պարոն, անպրակը այս կողմը կը գնենք,—գէպի վեր՝ Նեխլիւդօվի երեսին նայելով, քաղցրութեամբ ասաց Տարասի գիմացը նստած պարտիզանը:

—Մի կերպ եօլա կ'երթանք,—երգեցիկ ձայնով ու ժըպտերես ասաց Տարասը և իր հուժկու ծեռքերով փետուրի նման վերցրեց իր երկու փթանոց տուպրակը ու դրեց պատուհանի

մօտ:—Տեղ շատ կայ, չը լինի էլ, կարելի է կանգնել, կարելի է և նստարանի տակը պառկել, Այնպէս հանգիստ է այնտեղ, ես իմ Աստուածը: Արժի տեղի համար աղմուկ բարձրացնել, —ասում էր նա, և երեսը փայլում էր բարեհոգի ու քաղցր արտայայտութեամբ:

Տարասը իր մասին ասում էր, որ չը խմած ժամանակ խօսք չի գալիս բերանը, իսկ երբ մի քիչ գցում է՝ հիանալի խօսքեր է գանում և ինչ ուզես կարող է ասել, եւ յիրաւի, լուրջ ժամանակը Տարասը առհասարակ լուր էր լինում, իսկ երբ խօսում էր, —որ շատ քիչ էր պատահում և միմիայն արտասովոր դէպքերում, —այն ժամանակ շատ ախորժելի կերպով ջրիկանում էր: Կոնծած ժամանակը նա և շատ էր խօսում, և լաւ էր խօսում, —շատ պարզ ու ջտակ կերպով և, որ գլխաւորն է, շատ քաղցրութեամբ, որ ուղղակի փայլում էր նրա բացկապտագոյն աշքերի և շրթունքներից չը հեռացող անուշ ժպիտի մէջ:

Այդպիսի դրութեան մէջ էր նա այսօր: Նեխլիւդօվի գալովը մի բոպէով ընդհատուեց նրա խօսքը: Բայց տոպրակը տեղաւորելուց յետոյ նա նստեց, ինչպէս առաջ նստած էր, և հուժկու աշխատաւոր ձեռքերը դնելով ծնկների վրայ ու նայելով ուղիղ պարտիզանի աշքերի մէջ՝ շարունակեց իր պատմութիւնը: Նա իր նոր ծանօթին ամենայն մանրամասնութեամբ պատմում էր կնոջ արածը, որի համար նրան աքսորի էին դատապարտել, և այն, թէ ինչու է ինքը այժմ նրա յետեւից Սիրիք գնում:

Նեխլիւդօվը երբէք մանրամասնօրէն չէր լսել այդ պատմութիւնը, ուստի և սկսեց հետաքրքրութեամբ ականջ դնել: Նա պատմութեան այն տեղին էր հասել, երբ թունաւորումը արդէն կատարուել էր և ընտանիքը իմացել էր, որ թունաւորողը մեղոսեան է:

XL

— իմ դարդս եմ պատմում, — ասաց Տարասը, սրտագին մտերմութեամբ դիմելով նեխլիւդօվին: — իսկ քրիստոնեայ մարդ է: Խօսքի բռնուեցինք, ես էլ սկսեցի պատմել:

— Այն, այս, — պատասխանեց նեխլիւդօվը:

— Հիմա ասեմ, եղբայր, թէ ինչպէս բանը բացուեց: Մայրիկս գերցրեց այդ բլիթը ու ասում է՝ «զնում եմ ոստիկանի մօտ»: Հայրիկս շատ խղճով հալեսը է: «Կաց», ասում է, «այ պառաւ, չես տեսնում, որ հարսը գեռ բոլորովին երեխայ է.



ԵՐԵՎԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ